



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 08(372) «21» մայիսի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ	
146	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-23-Ն օրենքը	
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
147	«2019 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-61-Ն հրամանագիրը	
	ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
148	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 333-Ն որոշումը	
149	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 334-Ն որոշումը	
150	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 342-Ն որոշումը	
151	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 349-Ն որոշումը	
152	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 356-Ն որոշումը	
153	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 357-Ն որոշումը	

154	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N 1004-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 358-Ն որոշումը	
155	«Ստեփանակերտ քաղաքում բնակարանաշինության նպատակա-յին ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 363-Ն որոշումը	
156	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 379-Ն որոշումը	
157	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի N 152 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 390-Ն որոշումը	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
158	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2462/02/15 որոշումը	
159	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0945/02/18 որոշումը	
160	ԱՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ/0036/05/17 որոշումը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
մայիսի 3-ին

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-79-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին կետի՝

- 1) «ա» ենթակետում «113,727.7» թիվը փոխարինել «116,727.7» թվով.
- 2) «բ» ենթակետում «112,591.2» թիվը փոխարինել «115,591.2» թվով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

Գումարը (հազար դրամներով)

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
1. Եկամուտների գծով	3,000,000.0
2. Ծախսերի գծով	3,000,000.0

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

Գումարը (հազար դրամներով)

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
ԸՆԴԱՄԵՆԸ	3,000,000.0
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	3,000,000.0

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

Գումարը (հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3,000,000.0
			այդ թվում՝	
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ	3,000,000.0

Բաժին	Խումբ	Դաս		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
			ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	
			այդ թվում՝	
	2		Այլ ծախսեր	3,000,000.0
	1		Այլ ծրագրեր	3,000,000.0 :

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

	Գումարը (հազար դրամներով)
Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3,000,000.0
այդ թվում՝	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3,000,000.0
այդ թվում՝	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	3,000,000.0
այդ թվում՝	
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	3,000,000.0
այդ թվում՝	
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3,000,000.0 :

Հոդված 6. Օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել փոփոխություններ համաձայն սույն օրենքի հավելվածի:

Հոդված 7. Սույն օրենքի հավելվածը համարվում է սույն օրենքի անբաժանելի մասը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. մայիսի 8
Ստեփանակերտ
ՀՕ-23-Ն

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

			հազար դրամով	
Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	3 000 000,0
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	3 000 000,0
	2		Այլ ծախսեր	3 000 000,0
		1	Այլ ծրագրեր	3 000 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	3 000 000,0
			ԱՀ կառավարություն	3 000 000,0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2019թ.

N 333-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 1-ին կետի «490», «422» և «68» թվերը փոխարինել «495», «423» և «72» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2019թ.

N 334-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
մայիսի 10-ի N 334-Ն որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մայիսի 11-ի N 350 -Ն որոշման

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատություն ստեղծելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

3. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

4. 2017 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցներով ձեռք է բերվել և հողօգտագործողներին տրամադրվել 13 685 կիլոգրամ արևածաղկի, 3 000 կիլոգրամ հլածուկի, 20 000 կիլոգրամ կտավատի, 20 000 կիլոգրամ սոյայի, 150 000 կիլոգրամ հնդկացորենի, 51 130 կիլոգրամ եգիպտացորենի, 9 336 կիլոգրամ սիսեռի, 14 000 կիլոգրամ ոլոռի և 3 470 կիլոգրամ առվույտի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 291 359 կիլոգրամ ֆոսֆորական և 413 959 կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 2 737 հեկտար արևածաղիկ, 500 հեկտար հլածուկ, 444 հեկտար կտավատ, 363,6 հեկտար սոյա, 2 308 հեկտար հնդկացորեն, 2840,6 հեկտար եգիպտացորեն, 103,7 հեկտար սիսեռ, 70 հեկտար ոլոռ և 158 հեկտար առվույտ:

Բացի նշված միջոցառումներից, անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն մշակողներին: Աջակցության ընդհանուր ծավալը կազմել է 63 120 000 ՀՀ դրամ գումար (315,6 հեկտարի դիմաց):

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 2 205 061 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 22 050 610 ՀՀ դրամ լրավճար:

2016 թվականին «Զրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման» միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրվել է 23 հեկտար ծխախոտի և 9 հեկտար բազմամյա տնկարկի, իսկ անձրևացման ոռոգման համակարգ 11 հեկտար սոխի մշակության համար:

2017 թվականին նույն միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրելու նպատակով հողօգտագործողներին անհատույց տրամադրվել է 170 132 000 ՀՀ դրամ՝ 299,08 հեկտար բազմամյա տնկարկների և 13 746 490 ՀՀ դրամ՝ 43,69 հեկտար ծխախոտի մշակության համար:

Ծրագրի իրականացման արդյունքում 2016 թվականի համեմատ 2017 թվականին շուրջ 2 անգամ ավելացել են արևածաղկի, շուրջ 5 անգամ հնդկացորենի, 2,3 անգամ եգիպտացորենի ցանքատարածքները: Ծրջանառության մեջ է դրվել կտավատի, սոյայի, սիսեռի, ոլոռի մշակությունը: Ընդլայնվել են արտադրական նշանակության բանջարանոցների տարածքները, որի արդյունքում կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բադրիջան, պոմիդոր, պղպեղ և սոխ) մթերման ծավալները: Պետք է նշել, որ 2017 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 200 հողօգտագործող:

2018 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով հողօգտագործողներին տրամադրվել 13 261,8 կիլոգրամ արևածաղկի, 125 928 կիլոգրամ կտավատի, 11 000 կիլոգրամ սոյայի, 62 100,8 կիլոգրամ հնդկացորենի, 31 626,6 կիլոգրամ եգիպտացորենի, 13 459 կիլոգրամ սիսեռի, 13 000 կիլոգրամ ոլոռի, 8 400 կիլոգրամ ոսպի, 920 կիլոգրամ լոբու և 8 000 կիլոգրամ առվույտի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 300 745 կիլոգրամ ֆոսֆորական և 348 738 կիլոգրամ կալիումական պարարտա-

կյութեր: Արդյունքում ցանվել է 2 512,3 հեկտար արևածաղիկ, 2 092 հեկտար կտավատ, 196 հեկտար սոյա, 737 հեկտար հնդկացորեն, 1 977,7 հեկտար եգիպտացորեն, 134,6 հեկտար սիսեռ, 65 հեկտար ոլոռ, 70 հեկտար ոսպ, 9,2 հեկտար լոբի և 400 հեկտար առվույտ:

Անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն և կարտոֆիլ մշակողներին: Աջակցության ծավալը կազմել է բանջարեղենի համար 65 202 000 ՀՀ դրամ գումար (326,01 հեկտարի դիմաց) և կարտոֆիլի համար՝ 6 600 000 ՀՀ դրամ գումար (44 հեկտարի դիմաց):

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 1 385 820 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 13 858 200 ՀՀ դրամ լրավճար:

Շրագրի իրականացման արդյունքում 2017 թվականի համեմատ 2018 թվականին շուրջ 5 անգամ ավելացել են կտավատի, 2,4 անգամ հլածուկի, 2,3 անգամ սիսեռի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել հլածուկի և սորգոյի մշակությունը: Ընդլայնվել են արտադրական նշանակության բանջարանոցների տարածքները, որի արդյունքում կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բաղրիջան, պոմիդոր, պղպեղ, գազար, կաղամբ, ճակնդեղ, սխտոր և սոխ) մթերման ծավալները: 2018 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 370 հողօգտագործող:

2018 թվականին ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման նպատակով ներկայացվել են թվով 84 հայտեր, ընդհանուր 1 018,9 հեկտարի համար, որից բավարարվել է 51-ը՝ 634,5 հեկտարի համար, այդ թվում՝ 40-ը (513 հեկտար)՝ բազմամյա տնկարկների մշակության համար, 8-ը (47,8 հեկտար)՝ ծխախոտի մշակության համար, իսկ 3-ը (73,7 հեկտար)՝ բանջարաբուստանային կուլտուրաների մշակության համար: Բավարարված հայտերի ընդհանուր արժեքը կազմել է 1 280 538 190 ՀՀ դրամ, որից անհատույց տրամադրման ենթակա գումարը կազմել է 400 624 314 ՀՀ դրամ, անտոկոս փոխառության տեսքով տրամադրման ենթակա գումարը 551 931 646 ՀՀ դրամ, մնացած գումարի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից:

5. Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի իմաստով օգտագործվող հասկացություններն են՝

1) ոռոգման անձրևացման համակարգ՝ ստացիոնար (ինքնագնաց հենարաններ չունեցող անձրևացման տեղակայանքներ, որի ժամանակ ջուրը ճնշումային ոռոգման փակ ցանցից տրվում է անձրևացման սարքերին) և շարժական (ինքնագնաց հենարաններից, պոմպային ագրեգատից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող ագրեգատներ կամ ինքնագնաց հենարաններից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող մեքենաներ) ոռոգման համակարգեր:

2) բազմամյա տնկարկ՝ արտադրական նշանակության այգիները, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղա-հատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր):

3) բանջարեղեն (այսուհետ՝ բանջարեղեն)՝ պոմիդոր, պղպեղ, բաղրիջան, սոխ, սխտոր, վարունգ, կաղամբ, գազար, բազուկ:

4) դաշտավարություն՝ երկրագործության ճյուղ, որը գլխավորապես զբաղվում է պարենային, ինչպես նաև թելատու և կերային դաշտային բույսերի մշակությամբ:

5) ընդդեմ մշակաբույսեր (այսուհետ՝ ընդդեմ մշակաբույսեր)՝ ոլոռ, սիսեռ, ոսպ, լոբի:

6) կերային խոտաբույսեր (այսուհետ՝ կերային խոտաբույսեր)՝ առվույտ, ռայգրաս, կորնզան:

7) յուղատու մշակաբույսեր (այսուհետ՝ յուղատու մշակաբույսեր)՝ արևածաղիկ, սոյա, կտավատ:

8) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա՝ ոռոգման կաթիլային, ենթահողային, շիթային և անրձևացման համակարգեր:

9) **ջերմոցային տնտեսություն**՝ բանջարանոցային մշակաբույսերի աճեցման համար նախատեսված, ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով կահավորված և ջեռուցվող լուսաթափանց ծածկոցով կառույց:

10) **ցանքաշրջանառություն**՝ նույն հողատարածքում իրար հաջորդող առնվազն չորս տարվա ընթացքում չորս տարբեր տեսակի մշակաբույսերի (ցելի) ցանքաշրջանառություն (ցանքափոխություն):

6. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ, և առաջնահերթ խնդիրը դրանց ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, մասնավորապես, դա վերաբերում է յուղատու մշակաբույսերին, ընդդեմ մշակաբույսերին, բանջարեղենին, հնդկացորենին, եգիպտացորենին, կերային խոտաբույսերին և ծխախոտին: Հանրապետության բնակչությանը սննդամթերքով ապահովվածության, ինչպես նաև սպառողական շուկայի հագեցվածության հարցում հատուկ տեղ է տրվում նաև պտղաբուծությանը:

7. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին տեղական վերամշակող ընկերությունների կողմից մթերվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը, անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, արտահանման համար մատակարարվող թարմ և վերամշակված պտուղների ծավալների ավելացումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

8. Արցախի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին տրամադրվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տնականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, նոր այգիների հիմնադրմանը, բազմամյա տնկարկների և գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

9. Բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը:

10. Գյուղատնտեսության մեջ կիրառվում են ջրման տարբեր եղանակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Ոռոգման կաթիլային համակարգը հիմնված է բույսի արմատային համակարգին՝ ջրի անմիջական մատուցման վրա: Կաթիլային ոռոգումը բույսի արմատային հատվածի դանդաղ և երկարատև ջրամատակարարումն է ողջ վեգետացիայի շրջանում՝ բույսի խոնավության օպտիմալ մակարդակն ապահովելու համար: Կաթիլային ոռոգման ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առանձին փոքր մակերեսներով կատարվում է հողի տեղայնացված խոնավացում անմիջապես յուրաքանչյուր բույսի արմատաբնակ տարածքում: Ենթահողային ոռոգումը դա ժամանակակից ոռոգման տեսակներից է, տվյալ ոռոգման դեպքում՝ ջուրը պարարտանյութերի հետ միասին մատակարարվում է անմիջապես արմատային համակարգին: Այս տարբերակն ունի բոլոր առավելություններն, ինչ որ ունի կաթիլային համակարգը: Ենթահողային ոռոգման տարբերակի հիմնական թերությունը սկզբնական ներդրման բավականին մեծ լինելն է: Սակայն այս եղանակի ջրախնայողությունը ամենամեծն է և, քանի որ այն գրունտի տակ է, կյանքն ավելի երկար է: Անձրևացման ոռոգման համակարգի միջոցով ոռոգումն իրականացվում է հատուկ մեքենաների միջոցով. դրանք լինում են ստացիոնար և շարժական: Անձրևացման համակարգերը պակասեցնում են ջրի ճանապարհային կորուստները, սակայն պահանջում բավական մուտքային ճնշում, որը բերում է էլեկտրաէներգիայի լրացուցիչ ծախսերի: Ջրի խնայողությունը մեծ չէ: Այս

եղանակի առավելություններն են ջրի կորուստների նվազեցում, ոռոգման գործընթացի շահագործման ծախսերի նվազեցում, հողամասի համաչափ խոնավացում: Այս տարբերակը թույլ է տալիս ոռոգումն իրականացնել խիտ գրաֆիկներով, ըստ բույսի պահանջարկի: Անձրևացման դեպքում հնարավոր է բույսին տրամադրել և՛ պարարտանյութ և՛ բուժման համար անհրաժեշտ դեղորայքներ: Այս տարբերակի թերություններից են մեծ սկզբնական ծախսերը, որոշ կուլտուրաների դեպքում՝ պայքարը հիվանդությունների դեմ, մեծ մուտքային ճնշումները, ինչն իր հերթին բերում է մեծ էներգետիկ ծախսերի:

11. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների, գարնանացան մշակաբույսերի, բանջարաբուստանային կուլտուրաների և ծխախոտի տարածքների ավելացման խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Դաշտավարության մեջ չափազանց կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը և ցանքատարածքների կառուցվածքի բարելավումը:

Մեկ տեսակի կուլտուրայի տնական մշակությունը նույն դաշտում իջեցնում է դրանց բերքատվությունը: Դաշտավարության մեջ առանց մշակաբույսերի հաջորդափոխություն սահմանելու, հնարավոր չէ լուծել հողերի բերրիության ապահովման և կայուն բերքի ստացման խնդիրները: Ցանքաշրջանառությունը միայն մշակաբույսերի և ցեղերի հաջորդականություն չէ, այլև ագրոտեխնիկական համալիր միջոցառումներ՝ մասնավորապես հողի մշակում, պարարտացում, հողատարման կանխարգելում, որոնց նպատակն է գյուղատնտեսական բույսերից կայուն և բարձր բերք ստանալը: Ցանքաշրջանառությունը մշակաբույսերի և ցեղերի գիտականորեն հիմնավորված հաջորդափոխությունն է ժամանակի (տարիների) և տարածության (դաշտերի) մեջ, կամ միայն ժամանակի: Ժամանակն այն գործոնն է, երբ ցանքաշրջանառության մեջ զբաղեցված մշակաբույսերը և ցեղերը նույն դաշտում հաջորդում են մեկը մյուսին, իսկ տարածությունը՝ երբ յուրաքանչյուր դաշտում եղած մշակաբույսերը կամ ցեղերը տվյալ ժամանակաշրջանում զբաղեցնում են որոշակի դաշտեր:

13. Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակությունը բարելավում է հողի ֆիտոսանիտարական վիճակը, պահպանում՝ էռոզիայից, ավելացնում՝ օրգանական նյութերի քանակը և բարելավում՝ ֆիզիկական հատկությունները: Այդ առումով յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, բանջարեղենի, կարտոֆիլի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի և ծխախոտի մշակությունը կարևորվում է ցանքաշրջանառության լավագույն բաղադրիչ լինելու, պարենային որոշ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնակերերի կայուն բազայի ստեղծման տեսանկյունից, իսկ ոռոգման կաթիլային համակարգերի կիրառումն ապահովում է մշակվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը:

14. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝

1) արդյունավետ և նպատակային օգտագործել ջրային ռեսուրսները, խթանել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը:

2) բարձրացնել պտղաբուծության ճյուղի արդյունավետությունը, ապահովել երկրի բնակչության կարիքները հայրենական արտադրության թարմ և վերամշակված պտուղներով, խթանել արտաքին շուկաներում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների (նուռ, ընկույզ, թուզ, արևելյան խուրմա, ձիթապտուղ, խնձոր, տանձ, սերկևիլ, թուխ, հոն և այլն) արտադրությունը, նվազեցնել ներմուծումը և ավելացնել արտահանման ծավալները:

3) ինտենսիվ պտղաբուծության զարգացման խթանման միջոցով իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն:

4) ապահովել վերամշակող ձեռնարկությունների համար անհրաժեշտ քանակությամբ հումք, այդ վերամշակող ձեռնարկությունների զարգացմամբ և քանակական աճով ապահովել դրանց կողմից օգտագործվող հումքի պահանջարկի բարձրացումը.

5) յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, կերային խոտաբույսերի բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, սպառման համար անհրաժեշտ ներկրման քանակի նվազեցումը.

6) ցանքաշրջանառությունների կիրառմամբ յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, կերային խոտաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը.

7) տարեկան մշակվող հողերի տարածքի ավելացումը, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին կատարումը, ցանքաշրջանառության ապահովումը, բարձր ծլունակությամբ սերմացուների օգտագործումը, ցանքի նորմաների պահպանումը:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

2) նոսն տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում.

3) յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի ձեռքբերում ու անհատույց տրամադրում.

4) բանջարեղենի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

5) կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

6) ջերմոցային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

7) ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում:

16. Սույն Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը կտրամադրվի այն անձանց, որոնք չունեն գյուղատնտեսության ոլորտում ծագած հարաբերություններից բխող նախորդ տարիներից կուտակված չմարված պարտավորություններ (հողի հարկ, վարձավճար, մատակարարված ոռոգման ջրի դիմաց պարտք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ ժամկետանց պարտքեր), որը հավաստվում է համապատասխան փաստաթղթով:

17. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

18. Տեղական ինքնակառավարման մարմինները, հիմք ընդունելով նախարարության կողմից սահմանված ժամկետները, **յուղատու և ընդդեմ մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորեն, կերային խոտաբույսեր մշակելու ցանկություն ունեցող հողօգտագործողների դեպքում** ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայությունը (տեղեկանքը տրամադրվում է համայնքը սպասարկող գյուղատնտեսի կողմից), ընդունում են յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի, բանջարեղենի, ոռոգման կաթիլային համակարգով ծխախոտի և բանջարեղենի մշակությամբ, ջերմոցային

տնտեսությամբ և այգեգործությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների հայտերը համաձայն N 1 ձևի:

Հայտերի հետ միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին են ներկայացվում համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի համարը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականի կամ համապատասխան տեղեկանքի պատճենները:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների վարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժին:

19. Ռոռզման ժամանակակից տեխնոլոգիայով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող Արցախի Հանրապետության քաղաքացիները (հողօգտագործողներ) ամբողջ տարվա ընթացքում հայտերը ներկայացնում են նախարարություն՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով ռոռզման կաթիլային համակարգերի տեղադրման հնարավորությունները և պայմանները, կցելով վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Մեկ ամբողջություն կազմող միավոր տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ մի քանի անձանց (բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային իրավունքների առկայության պայմաններում, ռոռզման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու համար տրամադրվող պետական աջակցությունից այդ անձինք կարող են օգտվել գյուղատնտեսական կոռպերատիվ հիմնադրելու դեպքում:

20. Շրջանների վարչակազմերն ընդհանրացնում և մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 30-ը, ռոռզման կաթիլային համակարգով բանջարեղենի մշակության դեպքում՝ մինչև ապրիլի 30-ը, բանջարեղենի մշակության համար անհատույց ֆինանսական միջոցներ կամ դրանց համարժեք ապրանքանյութեր ստանալու նպատակով՝ մինչև օգոստոսի 1-ը նախարարություն են ներկայացնում սույն Ծրագրի 18-րդ կետում նշված տեղեկությունները:

21. Ռոռզման ժամանակակից տեխնոլոգիայով ծխախոտի, բանջարեղենի և բազմամյա տնկարկների մշակության դեպքում անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել եռակողմ պայմանագրի գործողության ժամկետից:

22. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամաններով սույն Ծրագրի 20-րդ կետում նշված տեղեկությունների ուսումնասիրման, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության համար տրամադրված ֆինանսական միջոցների կամ ապրանքանյութերի նպատակային օգտագործման և իրականացված աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

23. Բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

1) պետական աջակցությունը տրամադրվում է հետևյալ չափանիշներով՝

ա. նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

բ. ծխախոտի մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

գ. երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության միջոցով,

դ. բանջարեղենի և միամյա մշակաբույսերի մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (միամյա մշակաբույսերի մասով՝ բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության միջոցով,

ե. անձրևացման շարժական և ստացիոնար համակարգերով միամյա մշակաբույսերի մշակության համար համակարգի տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով.

2) սույն կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «ե» (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով ռոռզման ժամանակակից տեխնոլոգիայի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Սույն կետի 1-ին ենթակետի «ե» (անձրևացման շարժական համակարգի մասով) պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար անհատույց տրամադրվում է համակարգի արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավել, քան 7 500 000 ՀՀ դրամը, իսկ համակարգի արժեքի մնացած մասը և համակարգի տեղադրման արժեքը տրամադրվում է հողօգտագործողների կողմից:

Սույն կետի 1-ին ենթակետի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության համար անտոկոս փոխառության տեսքով տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

3) նույն հողատարածքում կամ դրա մաս կազմող հողատարածքում սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության նպատակով երկրորդ և հաջորդող տարիների համար տրամադրվում է 500 000 ՀՀ դրամ՝ անհատույց (բանջարեղենի և միամյա մշակաբույսերի մշակության դեպքում՝ հիմնադրամի միջոցով անտոկոս փոխառության տեսքով)՝ միայն կաթոցիկներով ներդրված միջշարային պոլիէթիլենային խողովակների փոխարինման նպատակով.

4) հանձնաժողովն Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, տեղում ճշտում է հողատարածքների մակերեսները, ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ռոռզման ջրի առկայությունը և ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման

նպատակահարմարությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով: Փաստաթղթերի մեկ փաթեթը կազմվում է մեկ կազմակերպության կողմից:

Համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և նախարարություն ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով.

5) սույն կետի 1-ին ենթակետի «ա», «գ» և «ե» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրելու նպատակով նախարարության կողմից սահմանած ժամկետում ռոռզման ժամանակակից տեխնոլոգիաներ (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրող լիցենզավորված ընկերությունները (այսուհետ՝ ընկերություններ) նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 3 ձևի.

6) հանձնաժողովը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և՝

ա. տալիս է եզրակացություն, միաժամանակ նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «ե» (անձրևացման շարժական համակարգի մասով) պարբերություններով նախատեսված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների ֆինանսավորման մասին՝ նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը,

բ. հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը՝ նշելով սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության մասով՝ անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը, իսկ «ա», «գ» և «ե» (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության մասով՝ անհատույց և (կամ) անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարները և անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, վերադարձման ժամկետները կամ վաղաժամկետ մարման հնարավորությունը՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով.

7) սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար ռոռզման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրելու նպատակով անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարները ենթակա են վերադարձման մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը.

8) հիմնադրամը՝

ա. դրական եզրակացություն ստացած սույն կետի «ա», «գ» և «ե» (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և ընտրված ընկերությունների հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված դրույթները,

բ. հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա ապահովում է գործընթացի իրականացումը՝ սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների հետ կնքելով անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 6-րդ ենթակետով «բ» պարբերությունով և 7-րդ ենթակետով նախատեսված դրույթները.

գ. սույն կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունով և 7-րդ ենթակետով նախատեսված գումարների լրիվ կամ մասնակի վերադարձման դեպքում՝ ապահովում է դրանց փոխանցումը պետական բյուջե.

9) նախարարությունը դրական եզրակացություն ստացած սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «ե» (անձրևացման շարժական համակարգի մասով) պարբերություններով նախատեսված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝ նախատեսելով ռոտզման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ:

10) հիմնադրամը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

11) ընկերությունների կողմից ռոտզման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից:

12) նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 10-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով:

13) պետական աջակցության տրամադրման պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով նվազագույնը 1 հեկտար, իսկ բանջարեղենի մասով՝ նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար ռոտզման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրման նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ռոտզման ջրով ապահովված, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ նաև տունկը կատարված լինելը:

14) ռոտզման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց արժեքները ենթակա են վերադարձման, ընդ որում՝ անտոկոս փոխառության մասով՝ վաղաժամկետ:

15) հիմնադրամը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ՝ տրամադրված և վերադարձված ու պետական բյուջե փոխանցված գումարների մասին:

16) սույն կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար ռոտզման ժամանակակից տեխնոլոգիաների ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության տրամադրումն իրականացվում է հիմնադրամի միջոցներով:

24. Նոան տնկիների ձեռքբերում և տրամադրում:

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված տարածքներում նվազագույնը 1 հեկտար մակերեսով ամբողջական հողատարածքում այգի հիմնադրելու համար հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են նոան տնկիներ 1 հեկտարի հաշվարկով 625 հատ տնկի:

2) նոան տնկիները ձեռք են բերվում նախարարության կողմից և անհատույց տրամադրվում հողօգտագործողներին՝ վարչակազմի ղեկավարի ներկայացրած տեղեկության հիման վրա:

3) Ծրագրից օգտվելու (նոան տնկիների անհատույց տրամադրում) պարտադիր պայման է հանդիսանում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքի համար այգի հիմնադրելու նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ռոտզման ջրով ապահովված լինելը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝

համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը տունկին պատրաստ (հերկված, տեղաձևած և փոսերը փորած) լինելու մասին.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

5) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված տնկիների արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

6) տրամադրված տնկիների նպատակային օգտագործումն ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով:

25. Յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի ձեռքբերում ու տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքում յուղատու և ընդդեմ մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորենի և կերային խոտաբույսեր մշակելու համար հողօգտագործողներին տրամադրվում է 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմ, պարարտանյութեր և ինոկուլյանտ, անհատույց (տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի սահմանված քանակները ներկայացված են N 1 աղյուսակում).

2) Ծրագրից օգտվելու (սերմի, պարարտանյութի և ինոկուլյանտի տրամադրում) պարտադիր պայման է համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը ցանքահին պատրաստ լինելու, որոշ (առվույտ, եգիպտացորեն, արևածաղիկ) մշակաբույսերի դեպքում նաև ռոտզման ջրով ապահովված լինելու կամ, ելնելով նշված հողատարածքում արձանագրված օդերևութաբանական ցուցանիշներից, սովյալ մշակաբույսերի մշակության համար պահանջվող կլիմայական գոտուն հողատարածքի համապատասխանության մասին: Պարարտանյութերը տրամադրվում են անհրաժեշտության դեպքում՝ հիմնավորված հողերի ագրոքիմիական հետազոտությունների արդյունքներով.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

4) Ծրագրում ընդգրկված մշակաբույսերի և խոտաբույսերի մշակության համար անհրաժեշտ սերմերը (հանրապետության տարածքում նախապես փորձարկված), պարարտանյութերը և ինոկուլյանտը հիմնադրամի կողմից ձեռք կբերվեն և կտրամադրվեն հողօգտագործողներին մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա.

5) Ծրագրով նախատեսված կորնզանի սերմերի մի մասը և առվույտի սերմերը հիմնադրամի միջոցով ձեռք կբերվեն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրերով՝ «Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն (կորնզան, առվույտ)» միջոցառմամբ նախատեսված ֆինանսական միջոցներով և կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացրած տեղեկության համաձայն.

6) կորնզանի սերմերի մնացած մասը, եգիպտացորենի, հնդկացորենի, սոյայի, սիսեռի և հլածուկի սերմերն ու հանքային պարարտանյութերը ձեռք կբերվեն հիմնադրամի միջոցներով և անհատույց կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա.

7) պետական աջակցությունը կտրամադրվի այն հողօգտագործողներին, որոնք հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան և ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կիրառում են ցանքաշրջանառություն.

8) շրջանների վարչակազմերը, մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը, տեղեկություններ են տրամադրում նախարարությանը սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի նպատակային օգտագործման և բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակության վերաբերյալ.

9) տրամադրված սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի նպատակային օգտագործումն ու բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակությունը ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են նաև մասնագետներ հիմնադրամից.

10) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի ոչ նպատակային օգտագործման, ինչպես նաև բնակլիմայական պայմաններին անհամապատասխան մշակության հետևանքով ցանքսերի ոչ լիարժեքության (չորացում, թերաճում, բարձր տոկոսայնությամբ նոսրություն) դեպքում տրամադրված սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:

26. Բանջարեղենի և (կամ) կարտոֆիլի մշակությամբ և (կամ) ջերմոցային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում բանջարեղեն մշակելու համար 1 հեկտարի դիմաց հողօգտագործողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ 200 000 ՀՀ դրամ, պոմիդոր մշակելու համար՝ 250 000 ՀՀ դրամ, կարտոֆիլ մշակելու համար՝ 150 000 ՀՀ դրամ՝ միանվագ գումարի կամ այդ գումարին համարժեք քանակությամբ ապրանքանյութերի տեսքով (մեկ հողակտորի մակերեսը ոչ պակաս, քան 0,5 հեկտար), իսկ ջերմոցային տնտեսությամբ զբաղվողներին՝ 1 հեկտարի դիմաց 2 000 000 ՀՀ դրամ (մեկ ջերմոցի մակերեսը ոչ պակաս, քան 135 քառակուսի մետր).

2) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, տասնօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ բանջարեղեն և կարտոֆիլ մշակելու և ջերմոցային տնտեսությամբ զբաղվելու համար դիմած հողօգտագործողների ցանկը՝ նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

3) աջակցությունն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

27. Ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած ծխախոտից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով.

2) լրավճարը տրամադրվում է Արցախի Հանրապետության տարածքում գործող ընկերություններին մթերված բերքի դիմաց.

3) մթերող ընկերությունները յուրաքանչյուր տարվա ծխախոտի բերքի (հումքի) մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում

նախարարություն՝ նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը.

4) նախարարությունը սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով մթերող ընկերությունների անվանումները և վճարման ենթակա գումարները.

5) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները.

6) մթերող ընկերությունները համապատասխան ֆինանսական միջոցներն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին են վճարում ծխախոտի բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարը:

28. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

29. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ջրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործում.

2) նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում.

3) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում.

4) մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

30. Ծրագրի իրականացումից յուրաքանչյուր տարի նախատեսվում է՝

1) ոռոգման կաթիլային համակարգեր տեղադրել ավելի քան 400 հեկտար բազմամյա տնկարկների և ծխախոտի մշակության համար.

2) հասնել ոռոգման ջրի 100 տոկոսով արդյունավետ օգտագործմանը, 30-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացմանը և ստացվող բերքի որակի բարձրացմանը.

3) ցանել ավելի քան 7 000 հեկտար յուղատու և ավելի քան 500 հեկտար ընդդեմ մշակաբույսեր.

4) վերամշակող ընկերություններում հողօգտագործողներից մթերել ստացված ծխախոտի ամբողջ հումքը.

5) ֆինանսական միջոցները կամ դրանց համարժեք ապրանքանյութերը տրամադրել շուրջ 500 հեկտար բանջարեղենի մշակության համար:

31. Յուղատու և ընդդեմ մշակաբույսերը, հնդկացորենը և բանջարեղենը հումք են հանդիսանում վերամշակող ընկերությունների համար: Յուղատու մշակաբույսերի վերամշակումից ստացված ձեթը, ընդդեմ մշակաբույսերից՝ հատիկը, հնդկացորենից՝ հնդկաձավարը և բանջարեղենից՝ պահածոները հանդիսանում են առաջին անհրաժեշտության պարենամթերք և ունեն մեծ դեր ու նշանակություն մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Կերային մշակաբույսերից ստացվում է անասնակեր, որը կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

32. Սույն Ծրագրի շրջանակներում տրամադրված պետական աջակցության միջոցով ստացված բերքի մթերումը (իրացումը) պետական աջակցության ծրագրի մաս չի կազմում՝ բացառությամբ մշակված ծխախոտից ստացված բերքի մթերումից (իրացումից):

33. Նվազագույնը 10 հեկտար մակերեսով գործող այգի ունենալու և հետագայում ևս առնվազն 10 հեկտարով այգու տարածքը մեծացնելու հնարավորության, անհրաժեշտ ջրային ռեսուրսների և համապատասխան ֆինանսական միջոցների

առկայության դեպքում պետական կամ այլ միջոցներով կկառուցվեն խորքային հորեր
(արտեզյան ջրհորներ) և էներգետիկ ենթակառուցվածքներ:»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության _____ շրջանի
_____ համայնքի ղեկավարին
(վարչակազմի ղեկավարին)

Հ Ա Յ Ց

Դիմող _____
(Ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____
Պետական գրանցման վկայականի համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Նախատեսվող աջակցության տեսակը _____

Մշակվող կուլտուրայի տեսակը _____
Մշակվող հողատարածքի մակերեսը _____
Հայտին կից ներկայացվում են՝
1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

(անուն, ազգանուն)
« _____ » _____ 20 ____ թ.

(ստորագրությունը)

Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____
Պետական գրանցման վկայականի համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Նախատեսվում է ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրել _____ հա
_____ համար
(մշակվող կուլտուրայի տարիքը, տեսակը)

Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրող
ընկերությունը _____

- Հայտին կից ներկայացվում են՝
1. _____
 2. _____
 3. _____
 4. _____
 5. _____
 6. _____

Լրացուցիչ
տեղեկություններ _____

(անուն, ազգանուն)

(ստորագրությունը)

« _____ » _____ 20__ թ.

Հ Ա Յ Տ

**Ոռոգման կաթիլային, շիթային կամ ենթահողային համակարգերի ներդրման
աշխատանքների մասնակցության**

..... ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամություն է հայտնում մասնակցելու ԱՀ կառավարության 2018 թվականի _____ -ի N _____-Ն որոշմամբ հաստատված «Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվելիք՝ ոռոգման կաթիլային, շիթային կամ ենթահողային համակարգերի տեղադրման աշխատանքներին:

Միաժամանակ հայտարարում եմ, որ՝

- մեկ միավոր հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգի տեղադրումն կիրականացվի Ընկերության կողմից,
- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը և ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ առնվազն երեք տարվա ընթացքում երաշխիքային սպասարկումն իրականացվում է Ընկերության կողմից.

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր՝ Ընկերության գործունեության և կատարած աշխատանքների մասին (ոչ պարտադիր դրույթ):

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Կից ներկայացնում եմ լիցենզիայի պատճենը:

Ստորագրող՝

.....

(պաշտոնը)	(անունը, ազգանունը)	(ստորագրությունը)
-----------	---------------------	-------------------

..... 20__թ.

Տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի սահմանված քանակները 1 հեկտարի համար

Հ/հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմերի քանակը (կգ)	Տրամադրվող ինոկուլյանտի քանակը (մլ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
				ֆոսֆոր	կալիում
2018 թվական					
1	Եգիպտացորեն (հատիկ)	20			
2	Եգիպտացորեն (սիլոս)	30			
3	Հնդկացորեն	80			
4	Արևածաղիկ	5		50	100
5	Մոյա	55	130	50	100
6	Կտավատ	50		50	
7	Առվույտ	20			
8	Ռայգրաս	35			
9	Ոլոռ	200			
10	Միսեռ	100			
11	Ոսպ	120			
12	Լոբի	100			
2019 թվական					
1	Եգիպտացորեն (հատիկ)	16			
2	Հնդկացորեն	80			
3	Արևածաղիկ	5		50	50
4	Մոյա	60	130	50	50
5	Հլածուկ	6		50	50
6	Կտավատ	50			
7	Մորգո	12			
8	Միսեռ	100			
9	Ոսպ	120			
10	Ոլոռ	200			
11	Կորնզան	100			
12	Առվույտ	20			

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2018 թվականի համար																
Հ/հ	Մշակա- բույսի կամ միջոցառ- ման անվանումը	Նախատեսվում է մշակել (հա)	Ցանքի կամ տնկման նորմա (կգ, հատ/հա)	Համախառն բերք (տ)	Անտույտ փոխառու- թյան և անհատույց դրամական միջոցներ (ՀՀ դրամ)	Մարաբարակուրթի պահանջը (կգ, հատ)	Մարաբարակուրթի արժեքը (ՀՀ դրամ)	Անհատույց դրամական միջոցների կամ սպարանքակուրթերի ստրամաբյուր (ՀՀ դրամ)	ՆՆՓ փորձարկումներ (ՀՀ դրամ)	Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ)	Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ինտելեկտուալ արժեքը (ՀՀ դրամ)	Պարարտանյութի արժեքը (ՀՀ դրամ)	որից՝		Ընդամենը ֆինանսա- կան միջոցներ (ՀՀ դրամ)
														ֆոսֆոր	կալիում	
1	Կաթիլային համակարգ	481			719252000				3000000	14000000						736252000
2	Եզիպտացո- րեն (հատիկ)	1352	20			27035	45959500									45959500
3	Եզիպտացո- րեն (սիլոս)	187	30			5610	9537000									9537000
4	Հնդկացորեն	1250	80			100000	54000000									54000000
5	Արևածաղիկ	3250	5			16250	77675000						73290000	24430000	48860000	150965000
6	Սոյա	200	55			11000	6930000					650000	4200000	1400000	2800000	11780000
7	Կտավատ	2740	50			137000	95900000						19180000	19180000		115080000
8	Առվույտ	400	20			8000	13600000									13600000
9	Ռայգրաս	34.4	35			1204	2408000									2408000
10	Ոլոռ	100	200			20000	7600000									7600000
11	Սիսեռ	170	100			17000	9860000									9860000
12	Ոսպ	100	120			12000	13200000									13200000
13	Լոբի	10	100			1000	300000									300000
14	Ծխախոտ			3525							35250000					35250000
15	Բանջարեղեն	500						100000000								100000000
16	Կարտոֆիլ	200						30000000								30000000
ԸՆԴԱՄԵՆԸ		10974		3525	719252000		336969500	130000000	3000000	14000000	35250000	650000	96670000	45010000	51660000	1335791500

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2019 թվականի համար

Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատեսվում է ստանալ (հա)	Ցանցով կամ անկախ կողմից (ԿԳ, հաստ/հա)	Համակարգի քանակ (տ)	Անտառապահության և անտառային տնտեսության միջոցներ (ՀՀ դրամ)	Ապրանքային արտադրանք (ԿԳ, հաստ)	Ապրանքային արժեքը (ՀՀ դրամ)	Անտառային տնտեսության միջոցներ կամ ապրանքային արտադրանք (ՀՀ դրամ)	ՆԱՓ փորձարկումներ (ՀՀ դրամ)	Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ)	Լրավճար արժեքի քանակը (ՀՀ դրամ)	Ինտերպրետի քանակը (կտար)	Պարարտանյութի քանակը (ԿԳ)	որից՝		Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	որից՝		
														Հումք	Կալիում		ԱՆ 2019 թվականի պետական քրոջի		ԼՂՀ ԳԳԱՀ-ի միջոցներով (ՀՀ դրամ)
																	Բուսաբուծության համակարգի զարգացման ծրագրի (ՀՀ դրամ)	Բազմաբույս կերային խոտաբույսերի մշակության (կարկանդակ, անկախ) ծրագրի	
1	Կաթիլային համակարգ	391			587000000				1700000	113000000						600000000	600000000		
2	Եզիպտացորեն (հատիկ)	4000	16			64000	254400000									254400000	80020000		174380000
4	Հնդկացորեն	1937.5	80			155000	109275000									109275000			109275000
5	Արևածաղիկ	2800	5			14000	55860000						280000	140000	140000	55860000	55860000		
6	Սոյա	550	60			33000	24585000					66	55000	27500	27500	24585000			24585000
7	Կտավատ	6700	50			335000	247900000									247900000	247900000		
9	Սորգո	50	12			600	480000									480000	480000		
11	Սիսեռ	290	100			29000	32190000									32190000			32190000
12	Ոսկ	100	120			12000	8640000									8640000	8640000		
13	Ոլոռ	260	200			52000	22100000									22100000	22100000		
14	Հլածուկ	200	6			1200	1044000						20000	10000	10000	1044000			1044000
15	Կորնզան	1000	100			100000	58500000									58500000		52500000	6000000
16	Առվույտ	950	20			19000	47500000									47500000		47500000	
17	Ծխախոտ			2500							25000000					25000000	25000000		
18	Բանջարեղեն	425					85000000									85000000	85000000		
19	Գարտոֆիլ	100					15000000									15000000	15000000		
20	Ջերմոցային ղնտեսություն	5					10000000									10000000	10000000		
21	Նոսն տնկիներ	533.33	625				50000000									50000000	50000000		
ԸՆԴԱՄԵՆԸ		20291.83		2500	587000000		912474000	110000000	1700000	113000000	25000000	66	355000			1647474000	1200000000	100000000	347474000

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2019թ.

N 342-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 853-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումների գնահատման, արտոնության տրամադրման և կիրառման կարգը, «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովի կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 124 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 853-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «իրականացնողների» բառից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնողների)» բառերը, իսկ «տոկոսը» բառից հետո՝ «, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնողների համար՝ ներդրման ընդհանուր արժեքի 20 տոկոսը:» բառերը,

բ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արտոնությունը տարածվում է միայն այն ներդրումների վրա, որոնք ուղղվում են արտադրական բնույթի հիմնական միջոցների, հողամասերի և (կամ) կենսաբանական ակտիվների (այսուհետ՝ ակտիվների) ձեռքբերմանը (կառուցմանը, փոխակերպմանը):

Սույն կարգի իմաստով արտադրական բնույթի են համարվում այն ակտիվները, որոնք անմիջականորեն կապված են ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման հետ, և որոնց շահագործումն ուղղակիորեն նպաստում է կազմակերպության արտադրական պրոցեսի ընդլայնմանը, վերազինմանը, վերափոխմանը, արդիականացմանը կամ փոխակերպմանը:».

գ. 7-րդ կետի 3-րդ և 7-րդ ենթակետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

դ. 7-րդ կետի 4-րդ ենթակետում «հաշվապահական հաշվեկշռից» բառերը փոխարինել «ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից» բառերով,

ե. 7-րդ կետի 9-րդ ենթակետում «ձեռքբերման» բառից հետո լրացնել «(կառուցման, փոխակերպման)» բառերը,

զ. 7-րդ կետի 9-րդ ենթակետում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ ենթակետ.

«10) կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պատճենը:»,

է. տեքստում «հիմնական միջոցներ» բառերը դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ակտիվներ» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով,

ը. 15-րդ կետի 3-րդ ենթակետում և 16.1-ին կետում «(կառուցման)» բառը փոխարինել «(կառուցման, փոխակերպման)» բառերով,

թ. 21-րդ կետում ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերը փոխարինել ««Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ կետում «ֆինանսների նախարարի առաջին տեղակալ» բառերը փոխարինել «ֆինանսների նախարարի տեղակալ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2019թ.

N 349-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՍԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին տասնամյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑՅՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	90 000,0	-	-
	6		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	90 000,0	-	-
		1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	90 000,0	-	-
		06	ԱՀ տարածքի բազային պետական մասշտաբային շարքի 1:10000 մասշտաբի պլանային տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքներ	-	90 000,0	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	90 000,0	-	-
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	(90 000,0)	-	-
	1		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	-	(90 000,0)	-	-
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	-	(90 000,0)	-	-
		02	Տնտեսական զարգացման ծրագրեր	-	(90 000,0)	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	(90 000,0)	-	-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2019թ.

N 356-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 638 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,75 հեկտար, 0,5 հեկտար և 0,37 հեկտար արոտավայրերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2019թ.

N 357-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՄՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Օերություն	-	-	-	-
		1	Օերություն	-	-	-	-
		05	Պետական աջակցություն «Ստեփանակերտի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	1200.0	1200.0	1200.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	1200.0	1200.0	1200.0
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	(1200.0)	(1200.0)	(1200.0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(1200.0)	(1200.0)	(1200.0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2019թ.

N 358-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1004-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի «Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների հաշվառման և նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրման կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի հ. 344 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1004-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամները, Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների զավակները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, փախստականները, սույն կարգի իմաստով բազմազավակ, միածնող ընտանիքների անդամները բնակարաններ, բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով պետական ֆինանսական աջակցություն ստանում են Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Հիփոթեքային վարկավորմամբ բնակարանային պայմանների բարելավման համար Արցախի Հանրապետության քաղաքացիներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 101 ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 889-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 24-Ն որոշմամբ հաստատված կարգով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2019թ.

N 363-Ն

ք.Ստեփանակերտ

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Հաստատել Ստեփանակերտ քաղաքում բնակարանաշինության նպատակային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ որոշման հավելվածի 5-րդ գլուխը՝ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավահարաբերությունները կանոնակարգող՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքն ու հարակից օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆՈՍՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

1. Նախաբան

1. Արցախի Հանրապետության բնակչության բնակարանային պայմանների բարելավման խնդիրը շարունակում է մնալ օրակարգային՝ չնայած պատերազմից հետո Արցախի Հանրապետության իշխանություններն իրականացրել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինչպես քայքայված բնակարանային ֆոնդի վերականգնմանը, այնպես էլ դրա նորացմանը: Երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, բնակչության սոցիալական որոշ խմբերի բնակարանային ապահովությանն ուղղված պետական ծրագրերի իրականացումը մի կողմից, երիտասարդ նորաստեղծ ընտանիքների՝ նորակառույց շենքերում սեփական բարեկեցիկ բնակելի տարածք ունենալու պահանջը և պետական աջակցությամբ հիփոթեքային ծրագրերի շնորհիվ վարկային ռեսուրսների մատչելիության բարձրացումը մյուս կողմից, հանգեցրել է բնակարանների նկատմամբ պահանջարկի աճին: Ստեփանակերտ քաղաքում տարեկան 200-250 ընտանիք հիփոթեքային վարկավորման միջոցով ձեռք է բերում բնակարան: Ներկայումս շուրջ 150 ընտանիք (հինգ և ավելի երեխա ունեցող, գոհված զինծառայողների, արցախյան պատերազմի առաջին խմբի հաշմանդամների ընտանիքներ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) ընդգրկված է բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակներում: Ստեփանակերտում առկա 309 բազմաբնակարան շենքերի ավելի քան 83 տոկոսը կառուցվել է մինչև 1994 թվականը, որոնցից 15-ը՝ 139 բնակարանով, վթարային է: 1994 թվականից հետո քաղաքում կառուցվել է 52 շենք՝ ապահովելով ընդհանուր առմամբ 1721 նոր բնակարանի առաջարկ: Փաստորեն, գոյություն ունեցող բնակարանային ֆոնդը և դրա որակական ցուցանիշները, ինչպես նաև բնակարանաշինության արդի ծավալներն ու տեմպերը չեն բավարարում տարեցույցի աճող պահանջարկը:

2. Բնակարանների պահանջարկի առաջանցիկ աճը և առաջարկի անբավարար լինելը հանգեցնում է երկրորդային շուկայում բնակարանների գների և վարձավճարների բարձրացմանը: 2018 թվականի տարեվերջի դրությամբ բնակարանների մեկ քառակուսի մետրի միջին գինը կազմել է 253 000 ՀՀ դրամ՝ 2013 թվականի 220 000 ՀՀ դրամի դիմաց: Նորակառույց բնակարանների մեկ քառակուսի մետրի արժեքը միջինում կազմում է 400 000 ՀՀ դրամ, ինչը մատչելի չէ միջին եկամուտներ ունեցող ընտանիքների համար: Խնդրի լուծումը պահանջում է համակարգային մոտեցում, որը ենթադրում է բնակարանաշինության նպատակային ծրագրի իրականացում «պետություն-մասնավոր հատված» համագործակցությամբ՝ նպաստելով նաև բնակարանային շինարարության՝ որպես բիզնես գործընթացի կայացմանը:

3. Բնակարանաշինության նպատակային սույն ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) ուղղված է Ստեփանակերտ քաղաքի բնակիչների բնակարանային ապահովման խնդրի լուծմանը, այդ թվում՝ այն քաղաքացիների, ում հանդեպ Արցախի Հանրապետությունը ստանձնել է անհատույց բնակարան հատկացնելու պարտավորություն: Կառուցվող բնակարանները կարող են ձեռք բերվել բնակիչների սեփական միջոցներով կամ հիփոթեքային վարկավորման միջոցով: Ծրագրով նախատեսված նորակառույց բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքը չի գերազանցի 280 000 ՀՀ դրամը, ինչը կապահովվի պետական ներդրումների և շինարարական աշխատանքների

կազմակերպման արդյունավետության բարձրացման շնորհիվ: Այս հանգամանքը կնպաստի նաև երկրորդային շուկայում իրական գների ձևավորմանը:

4. Ծրագրով նախատեսվում է Ստեփանակերտ քաղաքում կառուցել երկու բնակելի թաղամաս: Տեղանքի ընտրությունը մեծապես պայմանավորված է մոտակայքում անհրաժեշտ սոցիալական և հաղորդակցման (կոմունիկացիոն) ենթակառուցվածքների առկայությամբ և Ստեփանակերտ քաղաքի գեղագիտական, ճարտարապետական տեսքի պահպանման ու բարելավման անհրաժեշտությամբ:

2. Ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները

5. Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1) ավելացնել Ստեփանակերտ քաղաքում նորակառույց բնակարանների առաջարկը՝ բարձրացնելով դրանց մատչելիությունը.

2) խթանել բնակարանային շինարարության՝ որպես բիզնեսի կայացման գործընթացը.

3) իրականացնել պետության՝ օրենսդրությամբ ստանձնած պարտավորությունները քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ:

6. Ծրագրի խնդիրներն են՝

1) կառուցապատման տեղանքի ընտրությունը՝ հաշվի առնելով բնակելի թաղամասերի ծավալատարածական հորինվածքի համահունչ լինելն առկա քաղաքաշինական լուծումներին, ինչպես նաև մոտակայքում սոցիալական և հաղորդակցման (կոմունիկացիոն) ենթակառուցվածքների առկայությունը.

2) կառուցվող բնակելի թաղամասերի ապագա բնակիչների համար սոցիալական ենթակառուցվածքների հասանելիության ապահովում.

3) կառուցապատողի ողջամիտ շահույթի միջակայքում բնակարանաշինության կազմակերպում՝ չունենալով կառուցապատողի համար գերշահույթ ապահովելու նպատակ, որի շնորհիվ նորակառույց շենքերում առաջարկվող բնակարանի գինը նկատելի ցածր կլինի Ստեփանակերտ քաղաքում ամբողջովին վերանորոգված և բնակության համար պատրաստի անշարժ գույքի վաճառքի միջին շուկայական գնից.

4) «Էկոնոմ դասի», ամբողջությամբ վերանորոգված ստանդարտ երկու, երեք և չորս սենյականոց բնակարանների առաջարկի ապահովում՝ մակերեսների հետևյալ միջին մոտավոր չափերով՝

ա. երկու սենյականոց բնակարան՝ 65 քառակուսի մետր,

բ. երեք սենյականոց բնակարան՝ 85 քառակուսի մետր,

գ. չորս սենյականոց բնակարան՝ 105 քառակուսի մետր.

5) բնակելի թաղամասերի բարեկարգում՝ ներառյալ խաղահրապարակների, սպորտհրապարակների և արտաքին ավտոկայանատեղերի կառուցումը,

6) բազմաբնակարան շենքերի շինարարության ընթացքում գնորդների՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բնակարանների գնման իրավունքի ձեռքբերման աջակցության ցուցաբերում:

3. Հիմնական հասկացությունները

7. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **գնորդ**՝ Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N24-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ընդհանուր պայմաններին բավարարող քաղաքացիներ, ովքեր կարող են բնակարան կամ բնակարանի գնման իրավունք ձեռք բերել հիփոթեքային վարկավորմամբ կամ առանց դրա.

2) **գնման իրավունք**՝ կառուցվող բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքից բնակարան գնելու՝ սեփականատեր չհամարվող անձի գույքային իրավունք, որը

տարածվում է նաև հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների համապատասխան բաժնային մասի վրա.

3) **գնման իրավունքի պայմանագիր**՝ կառուցապատողի և գնորդի միջև կնքվող՝ կառուցվող բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքից բնակարան գնելու իրավունքի պայմանագիր, որի կնքման գործընթացն ու առանձնահատկությունները սահմանված են ծրագրի 5-րդ բաժնում.

4) **կառուցապատող**՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ, որը կարող է հանդես գալ որպես քաղաքաշինական գործունեության սուբյեկտ՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում իրականացնելով բազմաբնակարան (ստորաբաժանված) կամ այլ նշանակության շենքի կառուցապատում.

5) **կառուցապատողի հատուկ հաշիվ**՝ Արցախի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում կառուցապատողի բանկային հաշիվ, որի վրա կատարվում են կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի պայմանագրով գնորդի կառուցապատողին կանխավճարային վճարումները.

6) **ներդրող**՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ ֆինանսավարկային կազմակերպություն, որը ծրագրի շրջանակում ֆինանսավորում է կառուցապատման աշխատանքները.

7) **շահառու**՝ Արցախի Հանրապետության քաղաքացիներ, ում հանդեպ Արցախի Հանրապետությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ստանձնել է անհատույց բնակարան հատկացնելու պարտավորություն.

8) **պետություն**՝ ծրագրի շրջանակում ներդրողի, կառուցապատողի, գնորդի, շահառուի հետ փոխհարաբերություններում Արցախի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման մարմին և Արցախի ներդրումային հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ), որն իրականացնում է ծրագրով սահմանված և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված գործառնություններ:

4. Ծրագրային միջոցառումները

8. Ծրագրով նախատեսվող բնակելի թաղամասերի կառուցապատման համար, հաշվի առնելով ծրագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, ընտրվել են Ստեփանակերտ քաղաքի հետևյալ հատվածները, որոնց կադաստրային քարտեզները բերված են Հավելված N1-ում և Հավելված N2-ում.

1) Հովհ. Թումանյան փողոցին հարակից՝ 2,56 հեկտար մակերեսով տարածքը (այսուհետ՝ Ծրագիր 1).

2) Տիգրան Մեծի փողոցին հարակից՝ 2,5 հեկտար մակերեսով տարածքը (այսուհետ՝ Ծրագիր 2):

9. Ծրագիր 1-ով կկառուցվի 187 (39-ը՝ 2 սենյականոց, 116-ը՝ 3 սենյականոց, 32-ը՝ 4 սենյականոց) բնակարան ունեցող 5-6 հարկանի 13 շենք, իսկ Ծրագիր 2-ով՝ 280 (55-ը՝ 2 սենյականոց, 171-ը՝ 3 սենյականոց, 52-ը՝ 4 սենյականոց և 2-ը՝ 5 սենյականոց) բնակարան ունեցող 6-9 հարկանի 12 շենք:

Շենքերի և բնակարանների մանրամասն տեխնիկական նկարագիրը բերված է ծրագրին կից Հավելված N3-ում:

10. Ծրագրի շրջանակում պետությունը՝

1) ի դեմս Արցախի Հանրապետության պետական նախարարի՝ իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

ա. փոխշահավետ համագործակցություն է հաստատում կառուցապատողի և (կամ) ներդրողի հետ՝ ծրագիրը համատեղ իրականացնելու համար կնքելով համագործակցության մասին պայմանագիր, որով ամրագրվում են յուրաքանչյուր կողմի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,

բ. ապահովում է հիմնադրամի և կառուցապատողի միջև համագործակցության պայմանագրի կնքումը, որով կառուցապատողը իրավունք է վերապահում հիմնադրամին կազմակերպել կառուցվող շենքերի բնակարանների (բացառությամբ պետության կողմից անհատույց տրվող բնակարանների) գնորդների կողմից գնման իրավունքի ձեռքբերման գործընթացը՝ վիճակահանությամբ, որի ընթացակարգը սահմանում է հիմնադրամը:

2) ի դեմս Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության՝ իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

ա. ապահովում է բազմաբնակարան շենքերի և Ծրագիր 1-ի շրջանակում կառուցվող մանկապարտեզի ճարտարապետաշինարարական նախագծի և նախահաշվային փաստաթղթերի կազմումն ու դրանց տրամադրումը կառուցապատողին կամ ներդրողին,

բ. աջակցում է կառուցապատողին պետական և համայնքային մարմինների հետ կապված փաստաթղթային ձևակերպումներին առնչվող հարցերում,

գ. կազմակերպում է ծրագրի 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տարածքներում շինարարական հարթակների նախապատրաստման աշխատանքները,

դ. ապահովում է բնակելի թաղամասերի արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցումը,

ե. ապահովում է շինարարության հեղինակային հսկողությունը և իրականացնում տեխնիկական հսկողությունը,

զ. բարեկարգում է բնակելի թաղամասերը,

է. իրականացնում է ծրագրին առնչվող օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառնություններ:

3) ի դեմս Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության՝ իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

ա. ապահովում է ծրագրի 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տարածքներում սեփականության իրավունքով Արցախի Հանրապետության քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատկանող հողատարածքի կամ այլ անշարժ գույքի (այսուհետ՝ մասնավոր գույք) ձեռքբերումը և դրա նկատմամբ պետության սեփականության իրավունքի գրանցումը՝ մասնավոր գույքի սեփականատիրոջ հետ անշարժ գույքի օտարման պայմանագրի հիման վրա կամ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ընթացակարգով,

բ. ապահովում է բազմաբնակարան շենքերի շինարարության համար նախատեսված անշարժ գույքի (հողատարածքի) անհատույց օտարումը կառուցապատողին,

գ. ապահովում է ծրագրի շրջանակում կառուցվող բազմաբնակարան շենքի նկատմամբ կառուցապատողի իրավունքների պետական գրանցումը, որի համար հիմք է հանդիսանում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողի ներկայացրած ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը և շինարարության թույլտվությունը,

դ. գնման իրավունքի պայմանագրի և այն վավերացնող նոտարի ծանուցման հիման վրա ապահովում է գնորդի գնման իրավունքի պետական գրանցումը՝ գրանցելով գնորդի կողմից ապագայում ձեռք բերվող բնակարանի նախագծային համարը և մակերեսի չափը՝ ըստ ճարտարապետաշինարարական նախագծի,

ե. ապահովում է բնակարանի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքի գրանցումը՝ կառուցված շենքում բնակարանի սեփականության իրավունքը կառուցապատողից գնորդին փոխանցելու՝ նոտարական վավերացում ստացած ակտի հիման վրա,

գ. իրականացնում է ծրագրին առնչվող՝ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթներ:

11. Կառուցապատողն իրականացնում է բնակելի թաղամասերի բազմաբնակարան շենքերի և Ծրագիր 1-ի շրջանակում՝ նաև մանկապարտեզի կառուցապատումը:

12. Կառուցված բնակարանների ընդհանուր թվի 30 տոկոսը և մանկապարտեզը ձեռք է բերվում պետության կողմից:

5. Գնման իրավունքի պայմանագրի կնքման գործընթացի նկարագրությունը և առանձնահատկությունները

13. Գնման իրավունքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ գնելու իրավունքը՝ պետական գրանցման: Գնման իրավունքի պայմանագրի կնքումից հետո գործարքը վավերացնող նոտարի ծանուցման հիման վրա Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության անշարժ գույքի կադաստրի վարչության կողմից կատարվում է բնակարանի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշում: Նախնական նշումը դադարում է դրանով նախատեսված գույքային իրավունքի հետագա գրանցումով, մասնավորապես՝ երբ այդ բնակարանի նկատմամբ գրանցվում է գնորդի սեփականության իրավունքը:

14. Գնման իրավունքի պայմանագրում պետք է նշվեն ապագայում ձեռք բերվող բնակարանի տարածքը նույնականացնող տվյալները՝ ըստ կառուցվող շինության ճարտարապետաշինարարական նախագծից վերցված հատակագծի, և բնութագրվի բնակարանը հանձնելու ժամանակ դրա ներքին հարդարման վիճակի նկարագիրը:

15. Գնման իրավունքի պայմանագիրը պետք է նախատեսի նաև ապագայում հանձնվելիք բնակարանի գինը: Եթե կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի պայմանագրով ապագայում հանձնվելիք բնակարանի գինը սահմանված է դրա մակերեսի միավորով կամ դրա չափի այլ ցուցանիշով, ապա սեփականության իրավունքի փոխանցման ակտով գինը որոշվում է՝ ելնելով շենքի կառուցման ավարտից հետո բնակարանի չափագրման տվյալներով գրանցված չափից:

16. Շենքի կառուցման ընթացքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումը մեկ կառուցապատողից մյուսին հիմք չէ գնորդի գնման իրավունքի դադարման համար:

17. Գնման իրավունքի պայմանագիրը կնքելուց հետո այլևս հավելյալ կամ նոր առուվաճառքի պայմանագիր կնքելու անհրաժեշտություն չի առաջանում:

18. Գնման իրավունքի պայմանագրով գնորդի կանխավճարային վճարումները կատարվում են Արցախի Հանրապետության տարածքում գործող բանկում բացված՝ բացառապես կառուցապատողի հատուկ հաշվին:

19. Կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի մուտքագրած դրամական միջոցները լրիվ կամ մասնակի կարող են գրավադրվել՝ հոգուտ գնորդի կամ գնորդի վարկատուի՝ որպես շենքի կառուցման ավարտից հետո բնակարանը սեփականության իրավունքով հանձնելու կառուցապատողի պարտավորության և գնման իրավունքի պայմանագրի լուծման դեպքում կանխավճարի վերադարձման՝ կառուցապատողի պարտավորության կատարման ապահովման միջոց:

20. Կառուցվող շենքի շինարարության ավարտի պետական գրանցումից հետո գնման իրավունքի պայմանագրով սահմանված, բայց ոչ ուշ, քան վեցամսյա ժամկետում կառուցապատողը գնորդին է ներկայացնում կառուցված շենքում բնակարանը սեփականության իրավունքով փոխանցելու ակտը (այսուհետ՝ Փոխանցման ակտ), որտեղ նշվում են տեղեկություններ՝

1) գնման իրավունքի պայմանագրով փոխանցման ենթակա բնակարանի մասին.

2) գնման իրավունքի պայմանագրով փոխանցման ենթակա բնակարանի գնի, կատարված կանխավճարային վճարումների և առկայության դեպքում՝ գնի չվճարված մասի վճարման պայմանների մասին.

3) կառուցված շենքը կառուցապատողի հաշվին շահագործման հանձնելու ժամկետի մասին:

21. Փոխանցման ակտը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման: Վերջինս գրանցվում է Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության անշարժ գույքի կադաստրում, և այդ պահից բնակարանը համարվում է գնորդին սեփականության իրավունքով փոխանցված, որից հետո կառուցապատողի հատուկ հաշվին գնորդի վճարած միջոցները փոխանցվում են կառուցապատողի սովորական բանկային հաշվին և տնօրինվում են կառուցապատողի կողմից:

6. Ծրագրի ֆինանսավորումը

22. Բազմաբնակարան շենքերի և Ծրագիր 1-ով նախատեսված մանկապարտեզի կառուցապատումը ֆինանսավորվում է կառուցապատողի կամ ներդրողի կողմից՝ սեփական կամ այլ միջոցների հաշվին, ինչպես նաև Ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված պայմանագրով սահմանված դեպքերում պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաֆինանսավորման կարգով: Ծրագրի 10-րդ կետով սահմանված աշխատանքները և 12-րդ կետում նշված գործառույթը պետությունն իրականացնում է պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

7. Ծրագրից ակնկալվող արդյունքները

23. Ծրագրի իրագործումը էական դեր կունենա քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման գործում՝ խթանելով բնակարանաշինությունը և նորացնելով բնակարանային ֆոնդը:

24. Կապահովվի շուկայականից նկատելի ցածր գներով բնակարանների առաջարկ՝ 467 ընտանիքի հնարավորություն տալով բարելավել իրենց բնակարանային պայմանները, որից մոտ 150 ընտանիք այդ բնակարանները կատանա պետության կողմից՝ անհատույց:

25. Ծրագիրը կապահովի ավելի քան 200 աշխատատեղ շինարարության ոլորտում, ինչպես նաև կլիթանի հարակից ճյուղերի (շինանյութերի արտադրությամբ և ներմուծմամբ զբաղվող ընկերությունների գործունեություն) զարգացումը:

26. Ծրագրի իրականացումը դրական կանդրադառնա տնտեսության իրական հատվածի աշխուժացման վրա:

27. Բարեկարգ բնակելի թաղամասերը, որոնք կներառեն նաև մանկապարտեզ, մանկական և սպորտային հրապարակներ, ավտոկայանատեղերի համար նախատեսված և հասարակական օգտագործման այլ տարածքներ՝ ունենալով անհրաժեշտ կանաչապատ տարածքներ և լուսավորություն, գեղեցիկ տեսք կհաղորդեն Ստեփանակերտ քաղաքի համայնապատկերին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կառուցվող շենքերի և բնակարանների նկատմամբ սահմանվող պահանջները

Ներքին հարդարման աշխատանքներ

N	Շենքերի մասերը, սենյակները	Օգտագործվող նյութերի նկարագիրը	Ծանոթագրություն
1	Հյուրասենյակներ, ննջասենյակներ	պատեր բարձրորակ լատեքսաներկում բարելավված գաջի սվաղի վրա	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		առաստաղներ լատեքսաներկում բարձրորակ գաջի քսահարթեցման վրա՝ ՄՆԻՊ (СНП) 3.04.01-87-ի համաձայն	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		հատակներ ՝ լամինատից, առնվազն 10 մմ հաստությամբ	լամինատը ՝ ISO 14486:2012 որակի ստանդարտներին համապատասխան
2	Միջհարկային բարձրություն		հատակ-առաստաղ ՝ նվազագույնը 2.7մ +/- 5սմ մաքուր բարձրությամբ
3	Միջանցքներ	պատեր բարձրորակ լատեքսաներկում, բարձրորակ գաջի սվաղի վրա	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		առաստաղներ լատեքսաներկում բարձրորակ գաջի քսահարթեցման վրա	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		հատակներ ՝ լամինատից, առնվազն 10 մմ հաստությամբ կամ սալիկապատ	լամինատը ՝ ISO 14486:2012 որակի ստանդարտներին համապատասխան սալիկը ՝ ISO 10545-2 որակի ստանդարտներին համապատասխան
4	Սանհանգույց և լոգասենյակ	պատեր ՝ երեսպատում ջնարակված խեցե սալիկներով առնվազն մինչև կախովի առաստաղի բարձրությամբ	խեցե սալիկները ՝ ISO 10545-2 որակի ստանդարտներին համապատասխան
		առաստաղներ ՝ կախովի, ջրակայուն նյութերով, ներկառուցված լուսատուներով	կախովի առաստաղը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		հատակներ ՝ խեցե սալիկներ	խեցե սալիկները ՝ ISO 10545-2 որակի ստանդարտներին համապատասխան
		կահավորանք ՝ ձենապակյա լվացարան և զուգարանակոնք, լոգախցիկի տակդիր կամ թուջե լոզնոց, ցնցուղ, ծորակներ	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
5	Խոհանոցներ	պատեր ՝ բարձրորակ լատեքսաներկում բարելավված գաջի սվաղի վրա և	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան սալիկը՝ ISO

		մասնակի սալիկապատում	10545-2 որակի ստանդարտին համապատասխան
		առաստաղներ ՝ լատեքսաներկում, բարձրորակ գաջի քսանարթեցման վրա	լատեքսաներկը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		հատակներ ՝ խեցե սալիկներ	խեցե սալիկը ՝ ISO10545-2 որակի ստանդարտներին համապատասխան
6	Դռներ և պատուհաններ	ներքին դռներ ՝ ՄՂՖ-ից կամ համարժեք այլ փայտանյութից	ներքին դռները ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		մուտքի դուռը ՝ երկաթյա հիմքով, երեսպատումը լաքապատված ՄՂՖ-ով	մուտքի դուռը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		պատուհաններ ՝ մետաղապլաստե երկշերտ ապակեփաթեթով, առնվազն երեք խցիկով, մարմարե /Հարավ/ արտաքին պատուհանագոգերով, պլաստմասե ներքին պատուհանագոգ	մետաղապլաստե պատուհանները ՝ որակի ստանդարտներին համապատասխան
		շքամուտքի դռներ ՝ պողպատե, ջերմամեկուսացված	շքամուտքի դռները ՝ Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
7	Լոջիաներ և պատշգամբներ	հատակներ ՝ խեցե սալիկներով երեսպատում	խեցե սալիկները ՝ ISO 10545-2 որակի ստանդարտներին համապատասխան
8	Մտորգենյա ավտոկայանատեղեր		առնվազն 18.0 քառ.մ մակերեսով, ավտոկայանատեղիի և ընդհանուր մուտքի տեխնիկական անվտանգության (ազդանշանային) ու տեսահսկման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման համակարգերի, ինչպես նաև ինժեներական և տեխնոլոգիական սարքավորումների նախատեսում
9	Ընդհանուր օգտագործման տարածքներ	Աստիճանավանդակների պատեր ՝ լատեքսաներկում և(կամ) յուղաներկում բարձրորակ գաջի սվաղի վրա	լատեքսաներկը և յուղաներկը ՝ Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
		աստիճանավանդակների սանդղաքայլերի և աստիճանահարթակների երեսպատում բազալտե կամ	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջ-

		մարմարե սալիկներով	ներին համապատասխան
		Հարկաբաժինների մուտքերի հատակներ սալիկապատում բազալտով կամ մարմարով	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
		Շքամուտքի արտաքին աստիճանների և հարթակների երեսպատում բազալտե կամ մարմարե սալիկներով	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
		Լուսատուների տեղադրում	լուսատուները Ռուսաստանի Դաշնության ԳՕՍՍ (ГОСТ) Р 54350-2011 որակի ստանդարտին համապատասխան կամ Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան

Արտաքին հարդարման, տանիքի կառուցման և բարեկարգման աշխատանքներ

1	Նորակառույց շենքի արտաքին պատեր	երեսպատում տուֆի, բազալտի, մարմարե սալիկներով	շենքի արտաքին հարդարում Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
2	Շենքի բակային տարածք	արտաքին լուսավորություն, բակային ինժեներական ցանցեր	բակային տարածքի բարեկարգում Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան
3	Տանիքի կառուցում	տրամադրված թիթեղով, մետաղական կմախքով	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ պահանջներին համապատասխան

Ինժեներական ցանցեր և կաթսայատուն

1	Արտաքին խողովակաշարեր	պոլիպրոպիլենից կամ մետաղյա	խողովակաշարի տրամագիծը՝ ըստ սահմանված նորմերի
2	Ներքին խողովակաշարեր	պոլիպրոպիլենից	խողովակաշարի տրամագիծը՝ ըստ սահմանված նորմերի
3	Ջեռուցման մարտկոցներ	ալյումինե	մարտկոցները ՝ EN 442/1/2-T 50K ջերմատվության որակի ստանդարտներին համապատասխան
4	Բնակարանների ներքին էլեկտրալարեր	պղնձյա, բազմաթել	հաղորդալարերը և մալուխները ՝ որակի ստանդարտներին համապատասխան
5	Էլեկտրական կցամասեր	անջատիչներ, խրոցներ, լուսատուներ, վարդակներ և այլն	կցամասերը ՝ որակի ստանդարտներին համապատասխան
6	Ջեռուցման համակարգ	Մնհատական ջեռուցման համակարգ գազի կաթսայի միջոցով	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության առաջադրանքին և նորմատիվ

			պահանջներին համապատասխան
7	Գազամատակարարում	Բնակարանների գազամատակարարում	տեխնիկական պայմաններին համապատասխան

1. Մակերեսների ներքին և արտաքին հարդարումն իրականացնել ՄՆԻՊ (СНИП) 3.04.01-87 պահանջների համաձայն:

2. Շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում (ջրամուտքերում) նախատեսել ցածր լարման ցանցեր (հեռահաղորդակցության, հեռախոսային, օպտիկամանրաթելային կապուղիներ և այլն) բնակարանների էլեկտրական մատակարարման հաշվիչներ, ջրամատակարարման ջրաչափեր, գազի հաշվիչ, լոգասենյակներում՝ հոսակներ և այլն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2019թ.

N 379-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 10-րդ, 68-րդ հոդվածի 1-ին և 69-րդ հոդվածի 1-ին մասերին ու «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 22-ի «Զինծառայողների պարտադիր պետական ապահովագրական գումարների չափերի և վճարման կարգի մասին» N 22 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՏՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման նախաբանում ««Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի» բառերով.

3) որոշման 1-ին կետի՝

ա. 1-ին պարբերությունում «զինծառայողների պարտադիր պետական ապահովագրական գումարների» բառերը փոխարինել «ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին տրվող դրամական աջակցության» բառերով,

բ. 2-րդ պարբերությունում «պարտադիր պետական ապահովագրական գումարներ է հատկացվում» բառերը փոխարինել «դրամական աջակցություն է տրվում» բառերով,

գ. 3-4-րդ պարբերություններում «Պարտադիր պետական ապահովագրական գումարը» բառերը փոխարինել «Դրամական աջակցությունը» բառերով,

դ. 3-րդ պարբերությունում «ապահովագրական դեպքի պահին գործող չափով, իսկ հաշմանդամության դեպքում՝ նաև հաշվի առնելով» բառերը փոխարինել «զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ հաշմանդամ

դառնալու պահին գործող չափով՝ ընդ որում հաշմանդամության դեպքում հաշվի է առնվում» բառերով:

4) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանել ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տալու կարգը՝ համաձայն հավելվածի:»:

5) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՄ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՆՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿԳՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳ»,

բ. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մույն կարգով կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տալու հետ կապված հարաբերությունները:»:

գ. 2-րդ կետում «Պարտադիր պետական ապահովագրական գումարները (այսուհետև՝ ապահովագրական գումար) նշանակվում և վճարվում են» բառերը փոխարինել «Դրամական աջակցությունը նշանակվում և տրվում է» բառերով,

դ. 3-րդ, 7-րդ կետերում «Ապահովագրական գումար» բառերը փոխարինել «Դրամական աջակցություն» բառերով,

ե. 4-րդ կետում «ապահովագրական գումարները տրվում են» բառերը փոխարինել «դրամական աջակցությունը տրվում է» բառերով,

զ. 5-րդ, 8-րդ, 10-11-րդ կետերում «ապահովագրական գումարները» բառերը փոխարինել «դրամական աջակցությունը» բառերով,

է. 7¹-ին կետում «Ապահովագրական գումարը» բառերը փոխարինել «Դրամական աջակցություն» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի «Սոցիալապես անապահով քաղաքացիներին նյութական օգնություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 61 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին կետի 1-ին պարբերությունում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով, իսկ 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին օգնություն է տրամադրվում սույն կարգին և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի

մասին» Արցախի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 10-րդ մասին համապատասխան:»,

բ. 2-րդ կետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով, իսկ ««Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» բառերը՝ ««Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» բառերով,

գ. 3-րդ կետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի «Ձուկված (մահացած) զինձառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի հատուցման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 256 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 333-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ՁՈՂՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ» բառերը փոխարինել «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ» բառերով.

2) որոշման նախաբանում ««Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 40-րդ» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին» բառերով, իսկ «հոդվածներին» բառը «հոդվածին» բառով.

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սահմանել զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինձառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը հատուցելու կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:».

4) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ»,

բ. 1-ին կետում ««Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության» բառերով, իսկ «սահմանված» բառից հետո լրացնել «զինվորական ծառայության ժամանակ» բառերը,

գ. 2-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունում «զինձառայողությունից» բառը փոխարինել «զինվորական ծառայությունից» բառերով, «պատ-

ճառը» բառից հետո լրացնել «զինվորական» բառը, իսկ «դ» պարբերությունում «կենսաթոշակ ստացած» բառերը փոխարինել «զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող» բառերով:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2019թ.

N 390-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Հարկադիր կատարողին ներկայացվող մասնագիտական և առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 152 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետի «Մասնագիտությունը» սյունակը «իրավագիտություն» բառից հետո լրացնել «տնտեսագիտություն, արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/2462/02/15
Քաղաքացիական գործ ԸԻԴ/2462/02/15
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Հ.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 25-ին ապրիլի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի.Կարապետյանի
մասնակցությամբ՝ դատավորներ Գ.Գրիգորյանի
Ա.Աբրահամյանի

Հ.Խաչատրյանի
Կ.Ղարայանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի ԱՀ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի ընդդեմ Լաուրա Աբրահամյանի՝ 7.840.656 /յոթ միլիոն ութ հարյուր քառասուն հազար վեց հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ՝ որպես վարձավճարի գումար բռնագանձելու, բռնագանձումը ողջ գույքի վրա տարածելու, վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջների մասին ԸԻԴ/2462/02/15 քաղաքացիական գործով պատասխանող Լաուրա Աբրահամյանի վճռաբեկ բողոքը՝ ԱՀ վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշումը վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասով՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Լ.Աբրահամյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/ ԱՀ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի ղեկավար Ռ.Կարապետյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է բռնագանձել Պատասխանողից 7.840.656 /յոթ միլիոն ութ հարյուր քառասուն հազար վեց հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ, բռնագանձումը տարածելով ողջ գույքի վրա և վաղաժամկետ լուծել վարձակալության պայմանագիրը:

Առաջին ատյանի դատարանը 2016թ. մարտի 17-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն. վճռել է բռնագանձել Պատասխանողից 2.660.322

/երկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ և վաղաժամկետ լուծել հողամասի վարձակալության պայմանագիրը:

Նշված վճռի դեմ 2016թ. ապրիլի 18-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

ԱՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2016թ. հունիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2016թ. մարտի 17-ի վճիռը բեկանել և փոփոխել է՝ որոշել է Պատասխանողից հոգուտ Հայցվորի բռնագանձել 794.220 /յոթ հարյուր ինսունչորս հազար երկու հարյուր քսան/ ՀՀ դրամ՝ որպես հողի օգտագործման համար նախատեսված վարձավճար: Մնացած մասով դատական ակտը թողնվել է անփոփոխ:

Նշված որոշումը Հայցվորը բողոքարկել է Գերագույն դատարան: Գերագույն դատարանը 2016թ. օգոստոսի 30-ի որոշմամբ մասնակիորեն՝ վարձավճարը և դրա նկատմամբ հաշվարկված տուգանքները բռնագանձելու պահանջների մասով, բեկանել է Վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանը 2018թ. հոկտեմբերի 23-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն. վճռել է Պատասխանողից հոգուտ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի գանձել 89.502 /ութսունինը հազար հինգ հարյուր երկու/ ՀՀ դրամ՝ որպես համայնքային պահուստային հողի վարձավճար: ԱՀ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի հայցն ընդդեմ Պատասխանողի՝ 7.751.154 /յոթ միլիոն յոթ հարյուր հիսունմեկ հազար հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ բռնագանձելու մասով՝ մերժել է:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. մարտի 17-ի վճիռը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 24-ին Պատասխանողը բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 2019թ. հունվարի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

2019թ. հունվարի 24-ին Պատասխանողը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Գերագույն դատարանը 2019թ. փետրվարի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, սահմանելով ժամկետ՝ ձևական սխալը շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

2019թ. մարտի 7-ին բողոքաբերը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի հիման վրա հարուցվել է վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ 2019թ. մարտի 13-ին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշումը ենթակա է վերանայման՝ գործով առկա նոր երևան եկած հանգամանքի հիմքով:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոք բերողի՝ սույն գործով առկա են երկու դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են: Դրանցից մեկը՝ Առաջին ատյանի դատարանի

2016թ. մարտի 17-ի վճիռն է՝ վարձակալության պայմանագիրը լուծելու մասին, մյուսը՝ Առաջին ատյանի դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի վճիռը՝ վարձավճար բռնագանձելու մասին, որով Առաջին ատյանի դատարանը արձանագրել է հետևյալը. «...Դատարանն արձանագրում է նաև, որ, չնայած 2015թ. վարձավճարը՝ 760.200 /յոթ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամը վճարելու պարտականությունն ըստ պայմանագրի 5.3 կետի պատասխանողի մոտ հայց ներկայացնելու օրվա՝ 2015թ. դեկտեմբերի 17-ի, դրությամբ չի ծագել, այնուամենայնիվ, գործի քննության ընթացքում լրացել է պայմանագրի 5.3 կետով սահմանված վճարման ժամկետը՝ 2016թ. հունվարի 25-ը, ուստի, Դատարանը գտնում է, որ պատասխանողի մոտ ծագել է նաև 2015թ. վարձավճարը վճարելու պարտավորությունը:

Նշվածից պարզ է դառնում, որ պատասխանողի չվճարած վարձավճարի գումարը կազմում է 89.502 /ութսունհինգ հազար հինգ հարյուր երկու/ ՀՀ դրամ...»:

Ըստ բողոքաբերի՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ Մարադա համայնքի կողմից դատարան դիմելու պահին՝ 2015թ. դեկտեմբերի 17-ին, Լ.Աբրահամյանը ոչ միայն որևէ պարտք չուներ վարձավճարի գծով, այլ ավելին՝ ուներ 760.200 /յոթ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր/-89.502 /ութսունհինգ հազար հինգ հարյուր երկու/ = 670.698 /վեց հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր իննսունութ/ ՀՀ դրամի գերավճար: Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2016թ. մարտի 17-ի վճիռը, որի հիմքում ընկած է Լ.Աբրահամյանի կողմից վարձավճարը վճարելու իր պարտականությունը չկատարելու փաստը, առնվազն, սխալ է:

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ, 466-րդ հոդվածները, բողոքաբերը պնդում է, որ վարձավճարը վճարելու պարտավորություն ունենալու և դրա վճարումը երեք ամսվա ընթացքում ուշացնելու փաստի հաստատումը կարող էր հիմք հանդիսանալ պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: Առաջին ատյանի դատարանն այդ հիմքով էլ լուծել է պայմանագիրը, գտնելով, որ պատասխանողն ունի չմարած պարտավորություններ:

Բողոքաբերը շեշտել է, որ նշվածին հակառակ, Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած մեկ այլ՝ 2018թ. հոկտեմբերի 23-ի վճռով հաստատվել է, որ Լ.Աբրահամյանը, սույն քաղաքացիական գործով հայց ներկայացնելու պահի դրությամբ, վարձավճարի գծով որևէ պարտավորություն չի ունեցել:

Բողոքաբերը պնդում է, որ եթե այդ փաստը հայտնի լիներ Վերաքննիչ դատարանին, ապա պայմանագիրը վարձավճարները չվճարելու հիմքով չէր լուծվի:

Ուստի, հաշվի առնելով, որ նշվածը հանդիսանում է նոր երևան եկած հանգամանք և գործի ելքի համար ունի էական նշանակություն, խնդրել է հարուցել նոր երևան եկած հանգամանքի հիմքով Վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել այն և մերժել հայցապահանջը՝ վարձակալության պայմանագիրը լուծելու մասով:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Առաջին ատյանի դատարանը 2016թ. մարտի 17-ի վճռով. 1. Հայցը բավարարել է մասնակիորեն: 2. Լ.Աբրահամյանից հոգուտ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի բնագանձել է 2.660.322 /երկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ, որից 2.533.640 /երկու միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր քառասուն/ ՀՀ դրամը՝ որպես հողի վարձավճարի գումար և 126.682 /հարյուր քսանվեց հազար վեց հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամը՝ որպես չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով տուգանք՝ բնագանձումը պատասխանողին պատկանող ողջ գույքի վրա տարածելով: 3. Վաղաժամկետ լուծել է Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի և Լ.Աբրահամյանի միջև 2005թ. մարտի 18-ին կնքված հողամասի վարձակալության թիվ 3 պայմանագիրը:

2. Նշված վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, սակայն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

3. Գործի նոր քննության արդյունքներով Առաջին ատյանի դատարանը 2018թ. հոկտեմբերի 23-ի վճռով. 1. Հայցը բավարարել է մասնակի: 2. Լ.Աբրահամյանից հոգուտ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի գանձել է 89.502 /ութսունինը հազար հինգ հարյուր երկու/ ՀՀ դրամ՝ որպես համայնքային պահուստային հողի վարձավճար: 3. Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի հայցն ընդդեմ Լ.Աբրահամյանի՝ 7.751.154 /յոթ միլիոն յոթ հարյուր հիսունմեկ հազար հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ, որից 6.742.294 /վեց միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր ինսունչորս/ ՀՀ դրամ՝ որպես համայնքային պահուստային հողի վարձավճար և 1.008.860 /մեկ միլիոն ութ հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ որպես հաշվարկված տուգանք բնագանձելու պահանջի մասով՝ մերժել է:

4.Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,...և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը հանդիսանում է քաղաքացիադատավարական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրենքով պահպանվող ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե բողոքաբերն ապացուցում է, որ՝

1/ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2/ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3/ այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Այս ինստիտուտի առանձնահատկություններից մեկն այն է, որ դատական ակտի վերանայման հիմք է հանդիսանում ոչ թե նյութական կամ դատավարական օրենքի խախտումը կամ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի սխալ գնահատումը դատարանի կողմից, այլ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների երևան գալը, որոնք հայտնի չէին կողմերին և դատարանին՝ դատական ակտը կայացնելուց առաջ: Նոր երևան եկած հանգամանքների՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հարցը դատարանը լուծում է, հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքները: Այս հարցում որոշիչ չափանիշ է հանդիսանում գործի ելքի վրա ազդելու նոր երևան եկած հանգամանքների ունակությունը:

Գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն այն փաստերն են, որոնք ունեն էական նշանակություն կողմերի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունների որակման համար, գոյություն են ունեցել գործի քննության պահին, հայտնի չեն եղել գործին մասնակցող անձանց, կամ հայտնի են եղել, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կայացվել է այլ դատական ակտ, քան կկայացվեր, եթե դրանք տրամադրված լինեին դատական ակտը կայացնող դատարանին:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն, արդյո՞ք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա:

Սույն գործով բողոքաբերը որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչել է Առաջին աստիճանի դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված փաստական հանգամանքները: Նշված վճռով Առաջին աստիճանի դատարանը վճռել է հայցը բավարարել մասնակի. Լ.Աբրահամյանից հօգուտ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի գանձել է 89.502 /ութսունինը հազար հինգ հարյուր երկու/ ՀՀ դրամ՝ որպես համայնքային պահուստային հողի վարձավճար: Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի հայցն ընդդեմ Լ.Աբրահամյանի՝ 7.751.154 /յոթ միլիոն յոթ հարյուր հիսունմեկ հազար հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ, որից 6.742.294 /վեց միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր ինսունչորս/ ՀՀ դրամ՝ որպես համայնքային պահուստային հողի վարձավճար և 1.008.860 /մեկ միլիոն ութ հազար ութ հարյուր վաթսուս/ ՀՀ դրամ՝ որպես հաշվարկված տուգանք բռնագանձելու պահանջի մասով՝ մերժել է:

Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը 2016թ. մարտի 17-ի վճռով վաղաժամկետ լուծել է վարձակալության պայմանագիրը՝ վարձավճարները և հաշվարկված տուգանքները ժամանակին չվճարելու հիմքով: Մինչդեռ սույն գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ Պատասխանողը նման պարտավորություն չի ունեցել, ինչը, որպես նոր երևան եկած հանգամանք ենթակա է գնահատման:

Հիմք ընդունելով վերոգրյալները, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից վկայակոչած՝ Առաջին ատյանի դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված փաստական հանգամանքը էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար, համարվում է նոր երևան եկած հանգամանք և հիմք է հանդիսանում Վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշումը՝ վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասով բեկանելու և այդ մասով գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածով, 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 254-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Լաուրա Աբրահամյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել ԱՀ վերաքննիչ դատարանի 2016թ. հունիսի 15-ի որոշումը՝ վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասով, այն բեկանել և այդ մասով գործն ուղարկել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ/0945/02/18
Քաղաքացիական գործ ԸԻԴ/0945/02/18
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան
Ն. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 26-ին ապրիլի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր	Հ.Աբրահամյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Ա.Աբրահամյանի
	Հ.Խաչատրյանի
	Ի.Կարապետյանի
	Կ.Ղարայանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Լեոնիդ Սուրենի Աղաջանյանի ընդդեմ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի, Նարինե Վալերիի Հայրապետյանի, Հասմիկ Վլադիմիրի Չաքարյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտար Նելլի Ենոքի Գրիգորյանի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի՝ առաջին գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջի մասին քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019թ. փետրվարի 13-ի որոշման դեմ պատասխանողներ Նարինե Վալերիի Հայրապետյանի, Հասմիկ Վլադիմիրի Չաքարյանի և նրանց ներկայացուցիչ Ռոման Երիցյանի և պատասխանողի ներկայացուցիչ Սուրեն Միրզոյանի կողմից բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապայտությունը

2018 թվականի ապրիլի 9-ին Լեոնիդ Սուրենի Աղաջանյան /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ իր ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանի միջոցով ընդդեմ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի, Նարինե Վալերիի Հայրապետյանի, Հասմիկ Վլադիմիրի Չաքարյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտար Նելլի Ենոքի Գրիգորյանի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ որպես 12.04.2012թ. կնքված և ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1

նոտարական գրասենյակի սեղանամատյանի թիվ 1596 համարի տակ գրանցված առոչինչ գործարքի Սամվել Հարությունյանի և Ռուզաննա Խասապետյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք՝ 18.06.2012թ.-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-65 մատյանի 118479 համարի տակ Ռուզաննա Խասապետյանի անվամբ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ 17/2 հասցեով անշարժ գույքի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումը, Ռուզաննա Խասապետյանի և Նարինե Հայրապետյանի ու Հասմիկ Ջաքարյանի միջև 21.04.2017թ. կնքված և նույն նոտարական գրասենյակի սեղանամատյանի թիվ 1588 համարի տակ գրանցված առուվաճառքի պայմանագիրն ու այդ պայմանագրի հիման վրա 4.05.2017թ.-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մատյանում Նարինե Հայրապետյանի և Հասմիկ Ջաքարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով:

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ, նաև՝ Դատարան/ 2018 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել և հարուցվել է քաղաքացիական գործ:

Դատարանի 2018 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանի 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց Նարինե Վալերիի Հայրապետյանի և Հասմիկ Վլադիմիրի Ջաքարյանին արգելվել է ԱՀ, ք. Ստեփանակերտ, Աջափնյակ թաղամաս 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքի օտարման գործարքների կնքումը:

Դատարանի 2018 թվականի հունիսի 12-ի որոշմամբ Սամվել Հենրիխի Հարությունյանը ներգրավվել է որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ Հայցվորի կողմում:

Դատարանի 2018 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի վճռով հայցը մերժվել է: Միաժամանակ, հայցի ապահովման միջոցը պահպանվել է՝ մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված վճռի դեմ 2018 թվականի նոյեմբերի 26-ին վերաքննիչ բողոք է բերել Հայցվորի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանը:

Քաղաքացիական գործը և վերաքննիչ բողոքը՝ կից փաստաթղթերով, դատական կազմին են հանձնվել 2018 թվականի նոյեմբերի 28-ին:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2019թ. փետրվարի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԸԲԴ/0945/02/18 քաղաքացիական գործով 2018 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է և հայցը բավարարվել:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել պատասխանողի ներկայացուցիչ Ս.Միրզոյանը և պատասխանողներ Նարինե Վալերիի Հայրապետյանը և Հասմիկ Վլադիմիրի Ջաքարյանը ու նրանց ներկայացուցիչ Ռոման Երիցյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբեր Ս.Միրզոյանի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ, 121-րդ հոդվածի 3-րդ մասի, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1 և 2 կետերի պահանջները, 2-րդ, 44-րդ, 230-231-րդ հոդվածների պահանջները, անհիմն կիրառել է կիրառման ոչ ենթակա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 306-րդ հոդվածների պահանջները, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը, և խախտվել գործով պատասխանող Ռ.Խասապետյանի ԱՀ օրենքներով երաշխավորված իրավունքներն ու շահերը:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտմամբ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը դատական ակտի բեկանման և փոփոխման հիմք է հանդիսանում: Վերաքննիչ դատարանը՝ գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել, գործում առկա և դատաքննությամբ ձեռք բերված ապացույցներին օբյեկտիվ գնահատական չի տվել ու արդյունքում կայացրել է անհիմն դատական ակտ՝ խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, կասկածանքի տակ դնելով առաջին ատյանի դատարանում հաստատված փաստը, հանգել է անհիմն եզրակացության, որ այդ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը ակնհայտ սխալ է թույլ տվել: Սակայն Վերաքննիչ դատարանն իր այդ եզրահանգումը չի հիմնավորել, մասնավորապես, թե որ ապացույցի վրա է հիմնվել կամ ինչ նոր հանգամանք է բացահայտել, որոնք հիմք են տվել բեկանել և փոփոխել առաջին ատյանի դատարանի օրինական և հիմնավորված վճիռը:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով վիճարկվող գործարքով հայցվոր Լեոնիդ Աղաջանյանի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի խախտման և դատական պաշտպանության դիմելու իրավունքի հարցերը, իրավացիորեն եզրահանգել է, որ վիճելի գույքի նկատմամբ մինչև վիճարկվող գործարքը՝ առուվաճառքի պայմանագիր կնքելը և դրանից հետո, Հայցվորը սեփականության իրավունք ձեռք չի բերել, նշված գործարքով չի խախտվել Հայցվորի սեփականության իրավունքը, հետևաբար, նա չի հանդիսանում առոչինչ գործարքի անվավերության կիրառելիության մասով շահագրգիռ անձ:

Բողոքաբերի պնդմամբ՝ գործի քննությամբ հիմնավորվել է, որ վիճարկվող գործարքը կնքելու պահին ք. Ստեփանակերտի, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում էր Ս.Հարությունյանին: Մինչև գործարքի կնքելը և դրանից առաջ, Լ.Աղաջանյանը վերը նշված գույքի նկատմամբ որևէ իրավունք չի ունեցել, հետևաբար, վիճարկվող գործարքի կողմ չի հանդիսացել, ինչը վկայում է, որ վիճարկվող գործարքով չէր կարող խախտվել Լեոնիդ Աղաջանյանի

իրավունքները և շահերը, բնականաբար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի ուժով՝ նա չի կարող հանդիսանալ առաջին գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջի մասով շահագրգիռ անձ, ինչն էլ բավարար էր հայցը մերժելու համար:

Վերաքննիչ դատարանը Լ.Աղաջանյանի կողմից գործարքը վիճարկելու իրավունք ունենալու փաստը համարել է հաստատված առանց ապացույցների, մասնավորապես նշելով, որ շատ վաղուց վիճելի գույքը սեփականության իրավունքով պատկանում էր «Միդիս» ՍՊԸ-ին, որի տնօրենը հանդիսացել է Լ.Աղաջանյանը, այն դեպքում, որ Վերաքննիչ դատարանը ևս ընդունել է, որ գործարքը կնքելու ժամանակ վիճելի գույքի սեփականատերը հանդիսացել է Ս.Հարությունյանը, ով ներկայացել է նոտարական գրասենյակ և իր կամքով կնքել գործարքը:

Վերաքննիչ դատարանը՝ առանց որևէ հիմնավորման, «Միդիս» ՍՊԸ իրավաբանական անձը անհիմն նույնացրել է Լ.Աղաջանյանի ֆիզիկական անձի հետ՝ ինչը անթույլատրելի է: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հակասելով իր նման եզրահանգմանը և անվավեր ճանաչելով վիճարկվող գործարքը, այնուամենայնիվ գույքը Լ.Աղաջանյանին չի վերադարձրել:

Ավելին, Վերաքննիչ դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու դեպքում Լ.Աղաջանյանը վիճելի գույքի սեփականատերը չի դառնա և անհասկանալի է, թե դատական ակտը ինչպիսի բարենպաստ հետևանքներ է առաջացնելու Լ.Աղաջանյանի համար: Ընդհակառակը, նա ստիպված է լինելու վերադարձնել Ռ.Խասապետյանից փոխառություն վերցրած 20.000 ԱՄՆ դոլարից 10.000 ԱՄՆ դոլար ևս, որը ԱՀ Գերագույն դատարանի 21.02.2018թ. որոշմամբ հաշվանցվել էր վիճարկվող գույքով:

Բողոքաբերի կարծիքով՝ Ս.Հարությունյանի և Լ.Աղաջանյանի մտերիմ հարաբերությունները չեն կարող վկայել սեփականության իրավունքով Ս.Հարությունյանի պատկանող գույքի նկատմամբ Լ. Աղաջանյանի իրավունքների մասին և որևէ իրավական նշանակություն ունենալ սույն վեճի լուծման համար:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը՝ Լ. Աղաջանյանին համարելով սույն գործով շահագրգիռ անձ, կայացրել է սխալ որոշում, քանի որ Լ. Աղաջանյանը, երբևիցե չի ունեցել վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունք, քանի որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը: Գույքի օգտագործման հետևանքով ստացված պտուղների, արտադրանքի և եկամտի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերվում նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով: Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Բողոքաբերի կարծիքով՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ գույքային իրավահարաբերություններից ծագած վեճերից բխող գործերի դեպքում դատարան կարող է դիմել միայն իրավական շահագրգռվածություն ունեցող

անձը՝ շահագրգիռ անձը: Այսինքն՝ ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա գործերի հարուցման համար անհրաժեշտ է հայցվորի /դիմողի/ մոտ համապատասխան հայցապահանջով դատարան դիմելու որոշակի իրավական շահագրգռվածության առկայություն՝ որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևորագույն պայման, որը դրսևորվում է անձի՝ առերևույթ խախտված իրավունքների վերականգնման կամ այդպիսի խախտման վտանգը կանխելու անհրաժեշտություն: Նշվածից երևում է նաև, որ արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Մինչդեռ, սույն գործով չի հիմնավորվել այն հանգամանքը, որ Հայցվորը շահագրգիռ անձ է, մասնավորապես չի նշվել և չէր կարող էլ նշվել, թե ինչ իրավական հետևանք կառաջացնի վիճարկվող գործարքի անվավերությունը Լ. Աղաջանյանի համար, քանի որ նա երբևէ այդ գույքի սեփականատեր չի եղել և գործարքի անվավերության արդյունքում՝ չի դառնալու, սակայն նույն փաստական հանգամանքների հիման վրա առանց որևէ նոր ապացույց ձեռք բերելու և հետազոտելու պարագայում Վերաքննիչ դատարանը լրիվ այլ, ամբողջությամբ հակառակ իրավական եզրահանգման է եկել, և առանց հիմնավորման արձանագրել, որ տվյալ փաստի վերաբերյալ ստորադաս դատարանը սխալ է թույլ տվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է նաև, որ վիճարկվող առուվաճառքի գործարքը ըստ էության ուղղված է եղել փոխառության իրավահարաբերությունների ապահովմանը՝ իրականում նպատակ ունենալով նշված պայմանագրի կնքմամբ առաջացնել գրավի իրավահարաբերություններ:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումներն ակնհայտ անհիմն են, հակասում են քաղաքացիական գործով ձեռք բերված ու հետազոտված ապացույցներին, ԸԲԴ/2039/02/16 քաղաքացիական գործով ԱՀ Գերագույն դատարանի 2018 թվականի փետրվարի 21-ի որոշմանը, և, բեկանելով առաջին աստիճանի դատարանի օրինական ու հիմնավորված դատական ակտը, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները:

Նշելով, որ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրի 4.3 և 4.4 կետերը, ըստ որի՝ Լ.Աղաջանյանի կողմից փոխառության պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու դեպքում վիճելի գույքը վերադարձվելու է նրան, վկայում է, որ այդ գույքի օտարման գործարքը չի շոշափում Լ.Աղաջանյանի շահերը, ապա այդ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ այդ նորմերը ամենևին չեն վկայում վիճելի գույքի հետ Լ.Աղաջանյանի առնչության մասին, այլ ընդհակառակը՝ վկայում է այն մասին, որ Ռ.Խասապետյանն իրեն համարելով ձեռք բերված գույքի իրական սեփականատեր, արտահայտել է իր կամքը, որ պայմանագրով նախատեսված պարտքի գումարն ու տոկոսները ստանալու դեպքում միայն վիճարկվող

անշարժ գույքը կհանձնի Լ.Աղաջանյանին: Իսկ ինչպես սույն, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած թիվ ԸԲԴ/2039/02/16 քաղաքացիական գործով հիմնավորվել է, որ Լ.Աղաջանյանը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները և, բնականաբար, Ռ.Խասապետյանը պարտավոր չէ վիճելի գույքն օտարել հենց Լ.Աղաջանյանին:

Բողոքաբերի կարծիքով՝ նույնիսկ եթե ընդունեն, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ է ու վիճարկվող առուվաճառքի գործարքը շինծու է և այն կնքվել է որպես Ռ.Խասապետյանի և Լ.Աղաջանյանի միջև կնքված փոխառության գործարքի ապահովման միջոց, ու կողմերն իրականում նպատակ են ունեցել նշված պայմանագրի կնքմամբ առաջացնել գրավի իրավահարաբերություններ, այսինքն քողարկվել է գրավի գործարքը, ապա ինչու՞ Վերաքննիչ դատարանի կողմից որպես վիճարկվող գործարքի անվավերության հետևանք, վիճելի գույքի նկատմամբ չի ճանաչվել Ռ.Խասապետյանի գրավի իրավունքը, առավել ևս այն դեպքում, որ Լ.Աղաջանյանի կողմից, առայսօր չեն կատարվել գումարի բռնագանձման մասին դատարանի օրինական ուժ ստացած վճիռը:

Բոլոր դեպքերում, եթե նույնիսկ համաձայնվեն, որ վիճելի գործարքը կնքվել է որպես փոխառության պայմանագրի կատարումն ապահովելու երաշխիք, և քողարկվել է գրավի գործարքը, ապա անհասկանալի է մնում, թե ինչ տրամաբանությամբ է Վերաքննիչ դատարանը անվավեր ճանաչել վիճելի գործարքը, բայց որպես անվավերության հետևանք՝ վիճելի գույքի նկատմամբ չի ճանաչել Ռ.Խասապետյանի գրավի իրավունքը:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, բավարարելով Լ.Աղաջանյանի հայցապահանջը և անվավեր ճանաչելով առուվաճառքի գործարքը, ու Ռ.Խասապետյանին պարտավորեցնելով Ռ.Զաքարյանին և Ն.Հակոբյանին վերադարձնել անշարժ գույքի արժեքը՝ 4.850.000 ՀՀ դրամի չափով, չլուծված է թողել Լ.Աղաջանյանի կողմից Ռ.Խասապետյանից պարտք վերցրած 20.000 ԱՄՆ դոլարից 10.000 ԱՄՆ դոլարի բռնագանձման հարցը, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ԸԲԴ/2039/02/16 քաղաքացիական գործով ԱՀ Գերագույն դատարանի 21.02.2018թ. որոշմանը, ուստի բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի կայացրած որոշման պատճառաբանական մասի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ հետազոտված ապացույցների առկայության պայմաններում վերը նշված էական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ օբյեկտիվ իրավական գնահատական չտալու պայմաններում, Վերաքննիչ դատարանի եզրահանգումները թերի են ու ոչ օբյեկտիվ, հակասում են գործով ձեռք բերված գրավոր ապացույցներին, ինչը վկայում է, որ կայացվել է ոչ օբյեկտիվ ու չհիմնավորված դատական ակտ, քանի որ նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ

դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները, իսկ վերոշարադրյալից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, խախտել է նյութական և դատավարական իրավունքի բազմաթիվ նորմեր, որոնք ազդել են գործի ելքի վրա և հանգեցրել գործի սխալ լուծման և արդյունքում կայացրել է սխալ դատական ակտ, ինչը հիմք է դատական ակտը բեկանելու համար:

Բողոքաբերներ Նարինե Հայրապետյանը և Հասմիկ Զաքարյանը ու նրանց ներկայացուցիչ Ռոման Երիցյանը գտնում են, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 3-րդ, 28-րդ, 60-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ կետը և 306-րդ հոդվածը, կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.2-րդ, 230.3-րդ, 230.4-րդ հոդվածները և 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, որը պետք է կիրառեր, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Ըստ բողոքաբերների՝ Դատարանը հայցվորի պահանջը մերժելիս հիմք է ընդունել այն փաստը, որ հայցվորը որևէ օրինական հիմքով ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասի թիվ 17/2 շինարարական բազայի նկատմամբ մինչև գործարք կնքելը և դրանից առաջ սեփականության իրավունք ձեռք չի բերել, ուստի իրավացիորեն գտել է, որ նշված գործարքով չի խախտվել հայցվորի սեփականության իրավունքը և, հետևաբար, վերջինս չի հանդիսանում առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջի մասով շահագրգիռ անձ, ինչն էլ բավարար էր հայցը մերժելու համար: Վերոգրյալի հիման վրա էլ Դատարանը չի անդրադարձել գործարքը կնքելիս կողմերի իրական կամահայտնությանը և գործարքը քողարկելու նպատակի առկայության հանգամանքներին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը նշված պահանջը հաստատված է համարել գործի նյութերով, մասնավորապես նշելով, որ շատ վաղուց վիճելի գույքը սեփականության իրավունքով պատկանել է «ՄԻԴԻՍ» ՍՊ ընկերությանը, որի տնօրենը հանդիսացել է Լ.Աղաջանյանը, սակայն «ՄԻԴԻՍ» ՍՊ ընկերությանը որպես իրավաբանական անձի, այլ ոչ թե Լ.Աղաջանյանին՝ որպես ֆիզիկական անձի:

Վերոնշյալ գույքը ԱՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայությունը վաճառել էր Սամվել Հարությունյանին, որն էլ իր հերթին վաճառել էր Ռ.Խասապետյանին, որից էլ իրենք օրինական հիմքերով, ձևակերպելով օրենքի պահանջներին համապատասխան առուվաճառքի պայմանագիր, գնել են այդ գույքը:

Բողոքաբերների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, հայցվորի շահագրգիռ անձ հանդիսանալու և արդյունքում Դատարանի վճռի բեկանման հիմքում է դրել այն փաստը, որ Ռ.Խասապետյանի և Լ.Աղաջանյանի միջև կնքվել է նաև փոխառության պայմանագիր, որի 4.3 կետի համաձայն՝ փոխառության գումարը ժամանակին և լրիվությամբ վերադարձնելուց հետո վիճելի գույքը պետք է տրվեր Լ.Աղաջանյանին, իսկ 4.4 կետի համաձայն՝ նշյալ տարածքի հարկերը և տուրքերը մինչ փոխառության գումարի վերադարձնելը

վճարելու է Լ.Աղաջանյանը: Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել նաև Ս.Հարությունյանի ցուցմունքն այն մասին, որ չնայած սեփականության իրավունքով գույքը պատկանում է իրեն, այնուամենայնիվ փաստացի դա Լ. Աղաջանյանի սեփականությունն էր:

Ինչ վերաբերում է իրենց անբարեխիղճ գնորդ լինելու փաստի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը և նշված դատարանի կողմից այն փաստի հիմք ընդունելը, որ Լ.Աղաջանյանն իրենց ամուսիններին տեղեկացրել էր գույքը դատական վեճի առարկա լինելու փաստի մասին, անհրաժեշտ են համարում նշել, որ իրենք չէին կարող տեղյակ լինել, որ Լ.Աղաջանյանը կղիմի Դատարան նաև Ս. Հարությունյանի և Ռ.Խասապետյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը անվավեր ճանաչելու հայցով, նման բան նա իրենց ամուսիններին չի ասել: Լ.Աղաջանյանը իր ներկայացուցչի հետ միասին պահանջում է անվավեր ճանաչել փոխառության պայմանագիրը, որը մերժվել էր և գտնվում էր վերաքննության փուլում: Բողոքաբերները նշել են նաև, որ Ռ.Խասապետյանի ամուսնու՝ Սուրեն Միրզոյանի տված տեղեկության համաձայն Ռ.Խասապետյանի և Լ.Աղաջանյանի միջև կնքված փոխառության պայմանագրի անվավեր ճանաչելը կհանգեցնեք միայն 20.000 ԱՄՆ դոլար դրամային պարտավորության անվավերության:

Ավելին, Ս.Միրզոյանը իրենց ցույց է տվել առուվաճառքի պայմանագիրն ու սեփականության իրավունքի վկայականը, մինչդեռ փոխառության պայմանագրի 4.3 և 4.4 կետերի մասին իրենց ոչ ոք տեղեկություն չի տրամադրել: Իրենք վերլուծել են այդ փաստերը և գույքը գնել են այն ժամանակ, երբ Վերաքննիչ դատարանը մերժել էր Լ.Աղաջանյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ փոխառության պայմանագիրը անվավեր ճանաչելու հայցով, ուստի իրենք բարեխիղճ գույք ձեռք բերողներ են հանդիսանում:

Բողոքաբերներ Լարինե Հայրապետյանը և Հասմիկ Զաքարյանը ու նրանց ներկայացուցիչ Ռոման Երիցյանը գտնում են, որ Վերաքննիչ դատարանը, անհիմն կերպով հայցվոր Լ. Աղաջանյանին համարելով գործով շահագրգիռ անձ, կայացրել է սխալ որոշում, քանի որ վերջինս չի ունեցել վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունք, հետևաբար նրա որևէ իրավունք չի խախտվել, և նա շահագրգիռ անձ չէր կարող հանդիսանալ, իսկ գործով միանշանակ ապացուցված է, որ վերջինիս և Ռ.Խասապետյանի միջև կնքվել էր օրենքի բոլոր պահանջներին համապատասխանող առուվաճառքի պայմանագիր: Այսինքն՝ հայցվոր ճանաչված Լ. Աղաջանյանը չի կարող առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով հայց ներկայացնելու համար շահագրգիռ անձ հանդիսանալ, քանի որ նշված գործարքով նրա իրավունքները որևէ կերպ չեն խախտվել, և այդ պահանջի բավարարման դեպքում նրա որևէ իրավունք չէր կարող վերականգնվել, ինչն ակնհայտ երևում է Վերաքննիչ դատարանի հայցը բավարարելու մասին որոշման եզրափակիչ մասից:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերներ Ն.Հայրապետյանը և Հ.Զաքարյանը ու նրանց ներկայացուցիչ Ռ.Երիցյանը խնդրել են Վերաքննիչ դատարանի ԸԲԴ/0945/02/18 գործով 2019 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանել՝ Դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի վճռին տալով օրինական ուժ, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության,

սահմանելով նոր քննության ծավալը, իսկ պատասխանողի ներկայացուցիչ Ս.Միրզոյանը խնդրել է ՇԻԴ/0945/02/18 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 13.02.19թ. որոշումը բեկանել և ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ 16.07.2001թ. ԱՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում գտնվող շինարարական արտադրական բազայի նկատմամբ գրանցվել է <<Միդիս>>ՍՊԸ-ն սեփականության իրավունքը, որի ընդհանուր մակերեսը կազմում է 194,79 ք/մ, որից պահակատուն՝ 9,15ք/մ, գրասենյակ՝ 90.01 ք/մ, գուղարան՝ 1.44 ք/մ, պահեստ՝ 14.8 ք/մ, հողի մակերեսը՝ 0.2600 հա /այսուհետ, նաև՝ վիճելի գույք/: Նշված ընկերության տնօրենը հանդիսացել է Լեոնիդ Սուրենի Աղաջանյանը:

2/ 20.11.2003թ. <<Միդիս>> ՍՊԸ-ի անունից գործող ԴԱՀԿԱ ծառայությունը /վաճառող/ և Սամվել Հարությունյանը /գնորդ/ կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողը վաճառել, իսկ գնորդը որպես սեփականություն 157.415 ՀՀ դրամ գումարով ձեռք է բերել վիճելի գույքը: Վիճելի գույքի նկատմամբ 05.03.2012թ. գրանցվել է Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը:

3/ Թիվ 2-1140/04թ. քաղաքացիական գործով Դատարանի օրինական ուժի մեջ մտած առ 26.08.2004թ. վճռով ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում գտնվող, 20.11.03թ. առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված շինարարական արտադրական բազայի շինության նկատմամբ Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքի պետական գրանցման 30-օրյա ժամկետի բացթողումը համարվել է հարգելի և ճանաչվել է նշված շինության նկատմամբ Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը:

4/ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասի թիվ 17/2 շինարարական արտադրական բազայի նկատմամբ 05.03.2012թ. գրանցվել է Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք է հանդիսացել Դատարանի առ 26.08.2004թ. վճիռը:

5/ 2012թ. ապրիլի 10-ին Սամվել Հարությունյանի /վաճառող/ և Ռուզաննա Խասապետյանի /գնորդ/ միջև ստորագրված ու նոտարական վավերացում ստացած և սեղանամատյանի թիվ 1596 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ վաճառողը վաճառել, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերել վիճելի գույքը: Նույն պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 3.900.000 ՀՀ դրամ, որը պայմանագրի վավերացման պահին վաճառողը ստացել է:

6/ Նշված պայմանագրի հիման վրա վիճելի գույքի նկատմամբ ԱՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4/65 մատյանի 118479 համարի տակ 2012 թվականի հունիսի 18-ին գրանցվել է Ռուզաննա Խասապետյանի սեփականության իրավունքը:

7/ 2017թ. ապրիլի 21-ին է Ռուզաննա Խասապետյանի /վաճառող/ և Նարինե Հայրապետյանի ու Հասմիկ Զաքարյանի /գնորդներ/ միջև ստորագրվել, նոտարական վավերացում է ստացել և սեղանամատյանի թիվ 1588 համարի տակ գրանցվել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որի համաձայն՝ վաճառողը վաճառել, իսկ գնորդները որպես սեփականություն ձեռք են բերել վիճելի գույքը: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 4.850.000 ՀՀ դրամ, որը պայմանագրի կնքման պահին վաճառողը ստացել է:

8/ 2017թ. մայիսի 4-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում վերը նշված առուվաճառքի պայմանագրի հիման վրա վիճելի գույքի նկատմամբ գրանցվել է Նարինե Հայրապետյանի ու Հասմիկ Զաքարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում է, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքներով դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական հարցերը.

1. Իրավաչափ է արդյո՞ք ԱՀ վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վիճարկվող առուվաճառքի գործարքով խախտվել են Լ.Աղաջանյանի իրավունքները և օրինական շահերը:

2. Իրավաչափ է արդյո՞ք ԱՀ վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վիճարկվող առուվաճառքի գործարքը շինծու գործարք է և այն կնքվել է որպես Ռ.Խասապետյանի և Լ.Աղաջանյանի միջև կնքված փոխառության գործարքի ապահովման միջոց, այսինքն քողարկվել է գրավի գործարքը:

3. ԱՀ Գերագույն դատարանի 2018թ. փետրվարի 21-ի ԸԲԴ/2039/02/16 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պարագայում իրավաչափ է արդյո՞ք նույն հարցի վերաբերյալ ԱՀ վերաքննիչ դատարանի եզրահանգումները և ընդունած հակասական որոշումը, որի արդյունքում չլուծված է մնում Լ.Աղաջանյանի կողմից Ռ.Խասապետյանից փոխառություն վերցրած 20.000 ԱՄՆ դոլար գումարի հարցը:

Վիճարկվող գործարքի կնքման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ քաղաքացիական օրենսգրքի/ 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

Քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքն առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար Գերագույն դատարանը հարկ է համարում բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամք» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել հետևյալ փաստերը.

- օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.

- այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).

- գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը.

- վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.

- կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Հաշվի առնելով, որ հայցադիմումում նշված առուվաճառքի պայմանագիրը շինծու լինելը վկայակոչել է հայցվորը, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ վերոշարադրված փաստերի ապացուցման պարտականությունը կրում էր վերջինս:

1/ Օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայության փաստի վերաբերյալ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 561-րդ հոդվածի համաձայն՝ վաճառողն անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք:

Նույն օրենսգրքի 562-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ կետ), իսկ 2-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

2012թ. ապրիլի 10-ին Սամվել Հենրիխի Հարությունյանի /վաճառող/ և Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի /գնորդ/ միջև ստորագրված և նոտարական վավերացում ստացած և սեղանամատյանի թիվ 1596 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղ. թիվ 17/2 հասցեում գտնվող շինարարական արտադրական բազա, որի ընդհանուր մակերեսը կազմում է 194,79 ք/մ, որից պահակատուն 9,15 ք/մ, գրասենյակ՝ 90.01 ք/մ, զուգարան՝ 1.44 ք/մ, պահեստ՝ 14.8 ք/մ, հողի մակերեսը՝ 0.2600 հա:

Նույն պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 3.900.000 ՀՀ դրամ, որը պայմանագրի վավերացման պահին վաճառողը ստացավ:

Թիվ 120096 անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ք. Ստեփանակերտ, Աջափնյակ թաղամաս թիվ 17/2 շինարարական արտադրական բազայի նկատմամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական 4/65 մատյանի 118479 համարի տակ գրանցվել է Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի սեփականության իրավունքը, հիմքը՝ թիվ 1596 առ 10.04.2012թ. առուվաճառքի պայմանագիր:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ կողմերը, վկայակոչելով 21.02.2018թ. Գերագույն դատարանի որոշումը, պայմանագրի նոտարական վավերացման ձևը և պետական գրանցման պահանջը պահպանելով համաձայնության են եկել վերոնշյալ անշարժ գույքը 3.900.000 ՀՀ դրամով վաճառելու վերաբերյալ, ուստի գտնում է, որ Դատարանը ճիշտ եզրահանգման է եկել, որ կողմերի միջև օրենքով սահմանված ձևին համապատասխան կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Սամվել Հենրիխի Հարությունյանը Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի սեփականությանն է հանձնել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղ. թիվ 17/2 հասցեում գտնվող շինարարական արտադրական բազան, իսկ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանը պարտավորվել է դրա դիմաց վճարել 3.900.000 ՀՀ դրամ:

2/ Գործարքը վիճարկելու իրավունք ունենալու (շահագրգիռ անձ հանդիսանալու) փաստի վերաբերյալ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին զործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Հայցադիմումին կից ներկայացված թիվ 0002021 սեփականության իրավունքի վկայականից բխում է, որ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում գտնվող շինարարական արտադրական բազայի նկատմամբ 16.07.2001թ. գրանցվել է «Միդիս» ՍՊԸ-ն սեփականության իրավունքը:

2003թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ ԴԱՀԿ ծառայությունը, ով գործում է «Միդիս» ՍՊԸ-ն անունից /վաճառող/ և Սամվել Հարությունյանը /գնորդ/ կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն 157.415 ՀՀ դրամ գնով ձեռք է բերում ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում գտնվող անշարժ գույքը:

Թիվ 2-1140/04թ. քաղաքացիական գործով Դատարանի օրինական ուժի մեջ մտած առ 26.08.2004թ. վճռով ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամասում գտնվող, 20.11.03 առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված շինարարական արտադրական բազայի շինության նկատմամբ Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը պետական գրանցման 30-օրյա ժամկետի բացթողումը համարվել է հարգելի և ճանաչվել է նշված շինության նկատմամբ Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը:

Թիվ 119062 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամաս թիվ 17/2 շինարարական արտադրական բազայի նկատմամբ գրանցվել է Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք է հանդիսացել Դատարանի առ 26.08.2004թ. վճիռը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմքերը սահմանված են ԼՂՀ

քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածով, որի բովանդակությունից բխում է հետևյալը.

1. Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը:

Գույքի օգտագործման հետևանքով ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում սույն օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

2. Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

3. Քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց:

4. Իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում նման պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդ իրավաբանական անձին:

5. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

6. Բնակարանային, ամառանոցային, ավտոտնակային կամ այլ կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող այլ անձինք, որոնք լրիվ մուծել են իրենց փայավճարը կոոպերատիվի կողմից իրենց տրամադրված բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի կամ այլ շինության համար այդ գույքի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցվորը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ վիճարկվող գործարքը կնքելու պահին գույքի սեփականատեր է հանդիսացել ինքը, ավելին, վերոշարադրված ապացույցներից բխում է, որ գործարք կնքելու պահի դրությամբ գույքի սեփականատեր էր հանդիսանում Սամվել Հարությունյանը, ով գույքի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել Դատարանի վճռի հիման վրա և գրանցել սեփականության իր իրավունքը:

Գերագույն դատարանը փաստում է. նաև, որ Սամվել Հարությունյանից առաջ գույքի սեփականատեր էր հանդիսանում «Միդիս» ՍՊԸ-ը, այլ ոչ թե հայցվորը, որպիսի փաստը բխում է թիվ 0002021 սեփականության իրավունքի վկայականից և 2003թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից, ուստի Դատարանի եզրահանգումը, որ հայցվորը որևէ օրինական հիմքով ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղամաս թիվ 17/2 շինարարական արտադրական բազայի նկատմամբ մինչև վիճարկվող գործարք կնքելը ու դրանից առաջ սեփականության իրավունք ձեռք չի բերել, որ նշված գործարքով չի խախտվել հայցվորի սեփականության իրավունքը, հետևաբար վերջինս չի հանդիսանում առոչինչ գործարքի անվավերության հետևանքները

կիրառելու պահանջի մասով շահագրգիռ անձ, Գերագույն դատարանը իրավաչափ է և օրինավոր է համարում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ 2017թ. ապրիլի 21-ին Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի /վաճառող/ և Նարինե Վալերիի Հայրապետյանի ու Հասմիկ Վլադիմիրի Զաքարյանի /գնորդ/ միջև ստորագրված և նոտարական վավերացում ստացած և սեղանամատյանի թիվ 1588 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ վաճառողը վաճառում է, իսկ գնորդները որպես սեփականություն ձեռք են բերում ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ թաղ. թիվ 17/2 հասցեում գտնվող շինարարական արտադրական բազա, որի ընդհանուր մակերեսը կազմում է 194,79 ք/մ, որից պահակատուն 9,15 ք/մ, գրասենյակ՝ 90.01 ք/մ, զուգարան՝ 1.44 ք/մ, պահեստ՝ 14.8 ք/մ, հողի մակերեսը՝ 0.2600 հա: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 4.850.000 ՀՀ դրամ, որը պայմանագրի կնքման պահին վաճառողը ստացավ, իսկ թիվ 0405217-01-0005 վկայականով հաստատվում է, որ 2017թ. մայիսի 4-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում թիվ 1588 առ 21.04.2017թ. առուվաճառքի պայմանագրի հիման վրա ք. Ստեփանակերտ, Աջափնյակ թաղամաս թիվ 17/2 շինարարական արտադրական բազայի նկատմամբ գրանցվել է Նարինե Վալերիի Հայրապետյանի ու Հասմիկ Վլադիմիրի Զաքարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Գերագույն դատարանը փաստում է, քանի որ նշված պայմանագիրը, դրա հիման վրա գրանցված սեփականության իրավունքի գրանցումը և Ռուզաննա Խասապետյանի առ 10.04.2012թ. թիվ 1596 առուվաճառքի պայմանագրով գրանցված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելը հայցվորը պահանջում է որպես առ 10.04.2012թ. թիվ 1596 առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք, իսկ վերջինս չի հանդիսանում առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջի մասով շահագրգիռ անձ և հետևաբար իրավունք չունի պահանջելու կիրառել անվավերության հետևանքներ, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ հայցվորի շահագրգիռ անձ չհանդիսանալը բավարար է հայցը մերժելու համար, ուստի նշված պատճառաբանությամբ Դատարանի հայցը մերժելու մասին եզրահանգումը իրավաչափ է ու օրինավոր, հետևաբար Դատարանը իրավացիորեն չի անդրադարձել գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտության, վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայության կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայության հանգամանքներին և դրանց հիմքում ընկած ապացույցներին:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը բեկանելով և հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ «Վիճելի գույքը սեփականության իրավունքով պատկանել է «Միդիս» ՍՊԸ-ին, որի տնօրենը հանդիսացել է Լեոնիդ Աղաջանյանը: 2003թ. նոյեմբերի 20-ին «Միդիս» ՍՊԸ-ի անունից գործող ԴԱՀԿ ծառայությունը /վաճառող/ և Լեոնիդ Աղաջանյանի մտերիմ և աշխատակից Սամվել Հարությունյանը /գնորդ/ կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողը վաճառել, իսկ գնորդը որպես սեփականության 157 հազար 415 ՀՀ դրամ գումարով ձեռք է բերել վիճելի

գույքը: Վիճելի գույքի նկատմամբ 05.03.2012թ. գրանցվել է Սամվել Հարությունյանի սեփականության իրավունքը, իսկ Սամվել Հարությունյանը նախնական դատական նիստում հայտնել է, որ վիճելի գույքը իրականում պատկանում էր հայցվոր Լեոնիդ Աղաջանյանին: 11.04.2012թ. թվագրությամբ Հայցվորի և պատասխանող Խասապետյանի միջև կազմված փոխառության մասին պայմանագրի 4.3 կետում ևս ամրագրվել է փոխառության գումարը հետ վերադարձնելուց հետո վիճելի գույքը ոչ թե Սամվել Հարությունյանին, այլ Լեոնիդ Աղաջանյանին հանձնելու Ռուզաննա Խասապետյանի պարտականությունը: Ավելին, ըստ պայմանագրի 4.4 կետի՝ «նշված տարածքի հարկերը, տուրքերը, գրանցման հետ կապված ծախսերի վճարումը, մինչև փոխառության գումարի լրիվ հետ վերադարձնելը, կատարում է Լեոնիդ Աղաջանյանը՝ իր անձնական միջոցներով»», այսինքն պատասխանող կողմն ընդունել է վիճելի գույքը փաստացի Լեոնիդ Աղաջանյանին պատկանելու և նրա շահագրգիռ անձ հանդիսանալու փաստը: Նշված փաստն անուղղակիորեն հաստատվել է նաև ԸԻԴ/2039/02/16 քաղաքացիական գործով ԱՀ Գերագույն դատարանի 2018 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ, որի՝ վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող 5-րդ փաստի համաձայն՝ վիճելի գույքը Ռուզաննա Խասապետյանին վաճառել է Լեոնիդ Աղաջանյանի մտերիմ և աշխատակից Սամվել Հարությունյանը»:

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել նաև, որ առուվաճառքի պայմանագիրը կնքելիս կողմերի իրական կամաարտահայտությունը եղել է փոխառության պայմանագրի կատարման ապահովումը և կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս, այն է՝ գրավի պայմանագիրը, իսկ կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագիր քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Վերաքննիչ դատարանը առուվաճառք չի համարել և գտել է, որ դրա նկատմամբ կիրառելի է նույն օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները, քանի որ կողմերը մեկ այլ գործարքի քողարկման նպատակով են կնքել առուվաճառքի շինծու գործարք և կողմերի միջև կնքված շինծու գործարքն իրականում նպատակ է հետապնդել քողարկելու անշարժ գույքի գրավի գործարքի կնքումը, որն օրենքի ուժով առոչինչ է, ինչը Վերաքննիչ դատարանին հիմք է տվել եզրահանգելու, որ հայցը ենթակա է բավարարման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Գերագույն դատարանը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի, թե հայցվորի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները ու ներկայացված հայցի նպատակն արդյո՞ք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է

արդյո՞ք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները:

Գերագույն դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ վերլուծությունները հանգամանորեն կատարել է նաև առաջին ատյանի դատարանը ու հիմնավորված մերժել է հայցը, իսկ Վերաքննիչ դատարանի հայցի բավարարման վերաբերյալ եզրահանգումներն գործում առկա ապացույցները սխալ գնահատելու արդյունք են, որն էլ ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.2-րդ և 239-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, ուստի մնացած հիմքերին չի անդրադառնում: Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

Համաձայն ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է նյութական և դատավարական իրավունքի համապատասխան նորմերը և կայացրել օրինական և հիմնավորված վճիռ:

5.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքների բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հօգուտ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի և Նարինե Վալերիի Հայրապետյանի ենթակա է բռնագանձման 20.000 /քսան հազար/-ական ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019 թվականի փետրվարի 13-ի որոշումը և օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի վճռին:

2.Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հօգուտ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի և Նարինե Վալերիի Հայրապետյանի բռնագանձել 20.000 /քսան հազար/-ական ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարակետից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ/0036/05/17

Վարչական գործ ԸԻԴ/0036/05/17

Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան

Դատավորներ՝

Լ.Ավանեսյան

Ռ.Ջհանգիրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

23-ին ապրիլի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
մասնակցությամբ՝ դատավորներ

Գ. Գրիգորյանի

Հ. Խաչատրյանի

Ա. Աբրահամյանի

Ի. Կարապետյանի

Կ. Ղարայանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Դավիթ Ռաշիդի Մանգասարյանի ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի, Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին ԸԻԴ/0036/05/17 վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019թ. հունվարի 29-ի որոշման դեմ երրորդ անձ Բորիս Գրիգորյանի և նրա ներկայացուցիչ Աշոտ Ապրեսյանի, պատասխանող Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի կողմից բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

2017թ. մարտի 6-ին Դավիթ Ռաշիդի Մանգասարյանի /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանն ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի /այսուհետ, նաև՝ Համայնք/, Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի /այսուհետ, նաև՝ Կադաստր/ հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարան /այսուհետ, նաև՝ Վարչական դատարան/՝ Ստեփանակերտի քաղաքապետի 27.06.2013թ. թիվ 1186Աբ որոշումը /այսուհետ, նաև՝ վիճարկվող ակտ/, 02.07.2013թ. թիվ 92 պայմանագիրը /այսուհետ, նաև՝ Պայմանագիր/ և դրա հիման վրա Բորիս

Գրիգորյանի անվամբ 12.07.2013թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-75 մատյանի 149974 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն /այսուհետ, նաև՝ պետական գրանցում/ անվավեր ճանաչելու մասին պահանջներով:

Վարչական դատարանը 2017թ. մարտի 7-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ և հարուցել վարչական գործ: Նույն օրը Վարչական դատարանի կայացրած մեկ այլ որոշմամբ Բորիս Լազարի Գրիգորյանը /այսուհետ, նաև՝ Երրորդ անձ/ գործով ներգրավվել է որպես երրորդ անձ:

Վարչական դատարանը 2017թ. հունիսի 30-ի որոշմամբ գործով նշանակել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ կասեցրել գործի վարույթը՝ մինչև փորձագետի եզրակացության ստանալը:

Վարչական դատարանը 2017թ. օգոստոսի 8-ի որոշմամբ վերսկսել է գործի վարույթը և գործով հրավիրել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանը 2017թ. օգոստոսի 8-ի որոշմամբ «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ից և Կադաստրից պահանջել է լրացուցիչ նյութեր՝ փորձաքննությունն իրականացնելու նպատակով փորձագետին ներկայացնելու համար:

Վարչական դատարանը 2017թ. սեպտեմբերի 13-ի որոշմամբ գործով նշանակել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և փորձագետ: Նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ կասեցրել է գործի վարույթը՝ մինչև փորձագետի եզրակացության ստանալը:

Վարչական դատարանը 2017թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ բավարարել է փորձագետի միջնորդությունը և Կադաստրից, Համայնքից, Հայցվորից, Երրորդ անձից պահանջել լրացուցիչ նյութեր:

Վարչական դատարանի 2018թ. փետրվարի 14-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և նախնական դատական նիստ հրավիրվել:

Վարչական դատարանը 2018թ. փետրվարի 28-ին կայացրել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱ կազմակերպությանը փորձաքննության իրականացման դիմաց «ԱՀ դատական դեպարտամենտ» ՊԿ հիմնարկի միջոցով 182.280 ՀՀ դրամ չափով վճարելու մասին որոշում:

Վարչական դատարանը 2018թ. փետրվարի 14-ի որոշմամբ դատավարական իրավահաջորդության կարգով պատասխանող «ԼՂՀ կառավարության աշխատակազմ» ՊՀ կազմակերպությունը փոխարինել է ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմով:

Վարչական դատարանի 2018թ. մարտի 29-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Վարչական դատարանի 2018թ. հունիսի 11-ի որոշմամբ գործն ընդունվել է այլ դատավորի վարույթ և նշանակվել դատաքննության:

Վարչական դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2018թ. նոյեմբերի 23-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018թ. դեկտեմբերի 04-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունվարի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ:

Վերոնշյալ որոշման դեմ 2019 թվականի փետրվարի 27-ին և 28-ին երրորդ անձ Բորիս Գրիգորյանը և նրա ներկայացուցիչ Ա.Ապրեսյանը, պատասխանող Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանը վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Գերագույն դատարան:

Վճռաբեկ բողոքների պատասխան չեն ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ա/ Երրորդ անձ Բորիս Գրիգորյանի և նրա ներկայացուցիչ Ա.Ապրեսյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն են.

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ, որն ազդել է գործի էլքի վրա ու հանգեցրել գործի սխալ լուծման:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ հոդվածների, ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ, 27-րդ, 63-րդ հոդվածների պահանջներն ու անհիմն կիրառել է կիրառման ոչ ենթակա <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ԼՂՀ օրենքի 63-րդ և ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածների պահանջները, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման, ու ստորադաս դատարանի որոշումն ենթակա է բեկանման՝ օրինական ուժ տալով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.10.2018թ. վճռին:

Ըստ բողոքաբերների՝ Վարչական դատարանը, քննության առնելով վիճարկվող վարչական ակտերի արդյունքում հայցվորի իրավունքների խախտման հարցը, ապացուցված համարելով, որ հայցվորի շինության հարևանությամբ տեղակայված երրորդ անձին՝ Բորիս Գրիգորյանին, պատկանող վարսավիրանոց-կրպակի տարածքով ծանրաբեռնված հողամասից վարսավիրանոց-կրպակը հետագայում տեղափոխելու պայմաններ բովանդակող և նույն պայմաններով Բորիս Գրիգորյանին կրպակը տեղադրելու թույլտվություն տրվելու կապակցությամբ իրավական ակտ վարչական մարմինը չի ընդունել, բացի այդ, Բորիս Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն ունի առաջնահերթություն Դավիթ Մանգասարյանի կառուցապատման իրավունքի նկատմամբ, եզրահանգել է, որ հայցվորը չի ապացուցել սկզբնական հայցի պահանջով վիճելի վարչական ակտով իր իրավունքները խախտվելու մասին հայցի փաստական հիմքը, իսկ գործով չի հիմնավորվել վարչական ակտն ոչ իրավաչափ լինելու հանգամանքը և կայացրել է հայցը մերժելու մասին օրինական ու հիմնավորված դատական ակտ:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Վարչական դատարանի կողմից հիմք ընդունված փաստական հանգամանքները, քննության առնելով վիճարկվող վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու մասին վերաքննիչ բողոքում բարձրացված պահանջը, արձանագրել է, որ համայնքը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվի վիճարկվող ակտում վկայակոչված ԼՂՀ հողային օրենսգրքի 66-

րդ հողվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված պայմանի՝ գնորդի՝ Բորիս Գրիգորյանի մոտ գնման նախապատվության իրավունքի առկայությունն ու եզրահանգել է, որ բացակայել է վեճի առարկա հողամասը երրորդ անձին՝ Բորիս Գրիգորյանին գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառելու մասին իրավական հիմքը և, բավարարելով բողոքը, բավարարել է հայքը:

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումն ակնհայտ անհիմն է, այն հակասում է սույն վարչական գործով ձեռք բերված ու հետազոտված ապացույցներին, մասնավորապես՝ երրորդ անձ Բորիս Գրիգորյանի ցուցմունքով հիմնավորվել է, որ վիճելի շինությունը՝ վարսավիրանոց-կրպակը կառուցվել է նրա կողմից ավելի քան 20 տարի որպես վարսավիրանոց օգտագործվող փայտե շինության տարածքի վրա: Այս փաստը դատաքննության ժամանակ ընդունել ու վկայակոչել է նաև Ստեփանակերտի քաղաքային համայնքի ներկայացուցիչն ու չի վիճարկվել հայցվորի ներկայացուցչի կողմից, ինչը վկայում է, որ երրորդ անձ Բորիս Գրիգորյանն ուներ վիճելի հողամասը գնելու նախապատվության իրավունք:

Ավելին, վերաքննիչ դատարանը, քննության առնելով վիճարկվող վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու մասին վերաքննիչ բողոքում բարձրացված մյուս պահանջը, որ համայնքը սեփականության իրավունքով Բորիս Գրիգորյանին է փոխանցել ԼՂՀ հողային օրենսգրքով սահմանված օտարման ոչ ենթակա ընդհանուր օգտագործման տարածքը՝ մայթը, որով խախտվել են դրան սահմանակից հայցվորի կողմից կառուցված կառույցներն ըստ նպատակային նշանակության օգտագործելու, ինչպես նաև բնակչության երթևեկության համար նախատեսված մայթով տեղաշարժվելու իրավունքները, եզրահանգել է, որ վիճարկվող ակտով երրորդ անձին՝ Բորիս Գրիգորյանին փոխանցված հողամասը համարվում է բնակչության երթևեկության համար նախատեսված մայթ, որի սեփականության իրավունքով փոխանցումը քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց, արգելված է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով:

Նման եզրահանգումներն անհիմն են ու հակասում են սույն վարչական գործով ձեռք բերված ու հետազոտված ապացույցներին՝ 01.02.2018թ. թիվ ՀՄ 17-0437դ դատաշինարարատեխնիկական փորձագիտական եզրակացությա-նը, որի համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2009թ. նոյեմբերի 17-ի թիվ 1600Ս որոշմամբ Բորիս Լազարի Գրիգորյանին Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում վարսավիրանոց-կրպակ տեղադրելու համար կառուցապատման իրավունքով 18 քառ.մետր մակերեսով հողամասի տրամադրումը կատարվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ:

- Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին հատկացված ընդհանուր 24.1 քառ. մետր մակերեսով հողամասում կառուցված առևտրային օբյեկտի և Բորիս Լազարի Գրիգորյանին հատկացված 18 քառ. մետր մակերեսով հողամասում կառուցված վարսավիրանոցի մեկը մյուսի նկատմամբ օգտագործման, շահագործման, մոտեցումներ մուտքերի կազմակերպման պայմանների ապահովման տեսանկյունից խախտումներ մեկը մյուսի նկատմամբ չունեն:

- Առևտրային օբյեկտի գլխավոր ճակատի կողմից նախատեսված պատուհանների մի մասի անմիջապես վարսավիրանոցի կառույցին կից լինելը պետական գրանցման ելակետային փաստաթղթերով հատակագծային

տվյալներն իրականությանը չհամապատասխանող տվյալներով ներկայացնելու, նախագծային փաստաթղթերում իրականում գոյություն ունեցող կառուցապատման վիճակն անտեսելու հետևանք է:

- Դավիթ Ռաշիդի Մանգասարյանի կողմից իրականացված շինարարության արդյունքում փաստացի կառուցապատվել է լրացուցիչ հատկացված հողամասի եզրագծից մինչև վարսավիրանոցի եզրագիծը չհատկացված 0.58մ հողաշերտը:

- Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին հատկացված 18 քառ.մետր տարածքի ընդլայնումը 8.1 քառ.մետր տարածքով հանգեցրել է քաղաքաշինական թույլատրող իրավական ակտերի խախտման հետևանքին՝ օբյեկտի շինարարության ավարտումը փաստագրելու իրավական ակտերի բացակայության պայմաններում:

-Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում վարսավիրանոց-կրպակ տեղադրելու համար կառուցապատման իրավունքով Բորիս Լազարի Գրիգորյանին 18 քառ.մետր մակերեսով հողատարածքը հատկացվել է Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 1600Ա առ 17.11.2009թ. որոշմամբ, իսկ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում՝ 24 քառ.մետր մակերեսով հողատարածքում հուշարձան-հուշադրյուր կառուցելու թույլտվությունը և հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար 16 քառ.մետր մակերեսով հողատարածքի հատկացումը Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին կատարվել է Ստեփանակերտի քաղաքապետի 2011թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1553Ա որոշմամբ, այսինքն՝ վարսավիրանոց-կրպակ տեղադրելու համար կառուցապատման իրավունքով Բորիս Լազարի Գրիգորյանին 18 քառ.մետր մակերեսով հողատարածքը հատկացնելուց 2 տարի անց:

-Բորիս Լազարի Գրիգորյանին 2010թ. հունվարի 21-ին տրվել է թիվ 16 շինարարության թույլտվությունը՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/11 հասցեում վարսավիրանոց-կրպակ տեղադրելու նպատակով շինարարական աշխատանքներ կատարելու համար, հաստատելով վարսավիրանոց-կրպակի նախագիծը:

Ստեփանակերտի քաղաքապետի 2013թ. հունիսի 27-ի թիվ 1186Ա որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/11 հասցեով վարսավիրանոց-կրպակի զբաղեցրած 18 քառ. մետր մակերեսով հողամասը և դրանում տեղակայված 15,96 քառ. մետր մակերեսով շինությունն ուղղակի վաճառքի կարգով օտարվել է Բորիս Լազարի Գրիգորյանին:

-Բորիս Լազարի Գրիգորյանի և Ստեփանակերտի քաղաքային համայնքի միջև 2013թ. հուլիսի 02-ին կնքվել է թիվ 92 անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը, համաձայն որի Ստեփանակերտի քաղաքային համայնքը 29.700 ՀՀ դրամ որոշված գնի դիմաց Բորիս Լազարի Գրիգորյանին սեփականության իրավունքով հատկացրել է Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/11 հասցեով 18 քառ. մետր մակերեսով հողամասը և դրանում տեղակայված՝ արտաքին 15.96 քառ. մետր ընդհանուր մակերեսով շինությունը:

-Բորիս Լազարի Գրիգորյանի սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/11 հասցեով 18 քառ. մետր մակերեսով հողամասի և 15.96 քառ. մետր ընդհանուր մակերեսով վարսավիրանոց-կրպակի նկատմամբ գրանցվել է 2013թ. հուլիսի 12-ին:

- Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/22 հասցեով 0,00241 հա մակերեսով հողամասի նկատմամբ Դավիթ Ռաշիդի Մանգասարյանի կառուցապատման իրավունքը գրանցվել է 2015թ. մայիսի 05-ին, ինչից հետևում է, որ Դավիթ Մանգասարյանի կողմից հուշարձան-հուշադրյուրի և հասարակական նշանակության օբյեկտի կառուցումն իրականացվել է վիճելի հողատարածքի վրա վարսավիրանոց-կրպակի կառուցումից շուրջ 2 տարի անց և նման պարագայում դիտարկել, որ վարսավիրանոց-կրպակի կառուցումը խախտվել են Դավիթ Մանգասարյանի իրավունքներն ու քաղաքաշինական բնագավառում ուշադրության արժանի նորմերի ու կանոնների (լուսավորության, հեռավորության, հակահրդեհային, և այլ նորմերը) պահանջները, ինչպես նաև Ստեփանակերտի քաղաքային համայնքի և Բորիս Գրիգորյանի կողմից գոհված ազատամարտիկների հիշատակի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել, հեռու է արդարությունից և վիրավորական Արցախի ազատամարտի մասնակից Բորիս Գրիգորյանի համար:

Բացի այդ, դատաքննությամբ հիմնավորվել է, որ վարսավիրանոց-կրպակը կառուցվել է ոչ թե մայթին, այլ այն հողատարածքի վրա, որտեղ ավելի քան 20 տարի տեղադրված էր Բորիս Գրիգորյանի կողմից որպես վարսավիրանոց օգտագործվող փայտե շինությունը, որի մի կողմում՝ սկզբնամասում, մայթն ավարտվում է, իսկ մյուս կողմում՝ վերջնամասում, կառուցված է ավտոկայանատեղի, նման հանգամանքներում անհիմն է դառնում վիճելի վարչական ակտով Դավիթ Մանգասարյանի մայթով երթևեկելու իրավունքների ու շահերի խախտումը:

Բողոքաբերները գտնում են նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված ԸԻԴ/0188/05/15 և ԸԻԴ/0237/05/14 վարչական գործերով Գերագույն դատարանի որոշումները կիրառելի չեն սույն գործով:

Նշված պատճառաբանություններով բողոքաբերները խնդրել են վիճարկվող որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Վարչական դատարանի 23.10.2018թ. վճռին:

ք/ Պատասխանող Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն են.

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտման հիմքերով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 22-րդ, 24-26-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վկայակոչելով նշված նորմերի օրենսդրական շարադրանքը, բողոքաբերը նշում է, որ Վերաքննիչ դատարանը, վիճարկվող որոշման մեջ արված մեկնաբանության արդյունքում եկել է սխալ եզրահանգման, այդ մեկնաբանությունները, ընդհակառակը, պետք է հանգեցնեին հայցի մերժմանը և ոչ թե բավարարմանը: Մասնավորապես, չի հիմնավորվել, թե ո՞րն է հայցվորի իրական շահագրգռվածությունը, որո՞նք են դատարան դիմելու իրական /ռեալ/ իրավունքները, կա՞, արդյոք, լուրջ վեճ: Բողոքաբերը գտնում է, որ վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և

պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն ու ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների ու ազատությունների վրա, սակայն, Վերաքննիչ դատարանը աննշան կամ հեռակա կերպով վեճը կապելով հայցվորի չեղած իրավունքների և պարտականությունների հետ, կայացրել է այնպիսի որոշում, որի արդյունքում վեճին լուծում չի տրվել: Այսինքն, ըստ հայցվորի, վարչական ակտի անվավեր ճանաչման համար իր իրավունքների իրականացմանը ենթադրաբար խանգարել է վարսավիրանոց-կրպակի առկայությունը, սակայն որոշման արդյունքում շինությունը մնացել է նույն տեղը և ոչ մի շինարարական ու քաղաքաշինական նորմերի խախտում չի արձանագրվել, որոնք խոչընդոտ կհանդիսանան հայցվորի իրավունքների իրականացման համար, ինչն էլ ենթադրում է կրկին կառուցապատման իրավունքի պայմանագիր կնքելու հնարավորություն:

Հայցվորն ունի պետական գրանցում ստացած իրավունքներ միայն 24.1 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ, որտեղ իրականացրել է շինարարություն, և հայցի հիմքում, ըստ էության, այդ գրանցված իրավունքները չեն դրվել, միայն խոսվել է պետական սեփականություն հանդիսացող հողամասի և դրա վրա, ըստ թույլտվության, հայցվորի կողմից կառուցված հուշարձան-հուշադրյուրի մասին, որի նկատմամբ որևէ մեկի իրավունքը չի գրանցվել: Հուշարձան-հուշադրյուրի օգտագործման-շահագործման համար որևէ խոչընդոտ առկա չէ, այն մուտք գործելու համար ամենևին էլ անհրաժեշտություն չկա օգտագործել վարսավիրանոց-կրպակի տակ գտնվող հողամասը:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը, թե խախտվել է հայցվորի՝ «մայթով բնակչության երթևեկության իրավունքը» ևս անհիմն է:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև սույն գործով նշանակված դատաշինարարատեխնիկական փորձաքննության արդյունքում 2018թ. փետրվարի 1-ին տրված Հմ՝ 17-043Դ եզրակացությունը, որի «Հետևություններ» մասի 6-րդ կետում նշվել է, որ Հայցվորի և Երրորդ անձի կողմից կառուցված շինությունների օգտագործման-շահագործման, մոտեցումների մուտքերի կազմակերպման պայմանների ապահովման տեսանկյունից մեկը մյուսի նկատմամբ խախտումներ չունեն:

Երրորդ անձ Բորիս Գրիգորյանը գնման նախապատվությունը ձեռք է բերել որպես բարեխիղճ կառուցապատող /հողն օգտագործել է իր նպատակային նշանակությամբ, սահմանված ժամկետում կառուցապատել է, օգտագործել և կատարել դրանց համար նախատեսված վճարումներ/:

Ստեփանակերտի քաղաքապետի 2013թ. հունիսի 27-ի N1186Ա որոշմամբ վիճելի հողամասն արդեն իսկ հանվել է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մեջ գտնվող հողամասերի ցանկից, սակայն տեխնիկական սխալի պատճառով որոշման մեջ այդ մասին նշում չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԻԴ/0036/05/17 վարչական գործով 2019թ. հունվարի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի /վարչական/ դատարանի 2018թ. հոկտեմբերի 23-ի վճռին:

3.Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն գործով պարզված հետևյալ փաստերը.

1. Ստեփանակերտի քաղաքապետի 2009թ. նոյեմբերի 7-ի թիվ 1600Ա որոշմամբ Բորիս Գրիգորյանին Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում, վարսավիրանոցի կրպակ տեղադրելու համար, կառուցապատման իրավունքով հատկացվել է 18 քառ. մետր մակերեսով հողատարածք՝ ըստ կցված ուրվագծի /հատ., գ.թ. 36, 154/:

2. 2009թ. նոյեմբերի 30-ին Համայնքի և Երրորդ անձի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 158 պայմանագրով Ստեփանակերտի Ազատամարտիկների 37ա/11 հասցեով 18 քառ. մետր մակերեսով հողամասի նկատմամբ մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը Երրորդ անձին տրամադրվել է կառուցապատման իրավունք /հատ.1, գ.թ. 150-152/:

3. 2010թ. հունվարի 21-ին Համայնքի կողմից Երրորդ անձին տրվել է թիվ 16 շինարարության թույլտվությունը՝ մինչև 21.01.2011թ. /հատ.1, գ.թ. 37/:

4. Ստեփանակերտի քաղաքապետի 2011թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1553Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ թույլատրվել է Դավիթ Մանգասարյանին Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում 24 քառ. մետր մակերեսով հողատարածքում գոհված ազատամարտիկների հիշատակին կառուցել հուշարձան-հուշադրյուր, ինչպես նաև կից հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար հատկացվել է 16 քառ. մետր մակերեսով հողատարածք՝ հասցեն համարելով Ազատամարտիկների 37ա/22 /հատ.1, գ.թ. 19/:

5. Համայնքի 2013թ. հունիսի 27-ի թիվ 1186Ա որոշմամբ՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/11 հասցեում գտնվող վարսավիրանոց-կրպակի /վկայական թիվ 098585 առ 26.05.2010թ./ զբաղեցրած 0,0018 հա մակերեսով հողամասը և 15,96 քմ մակերեսով շինությունն ուղղակի վաճառքի կարգով օտարվել է Երրորդ անձին /հատ.1, գ.թ. 35/:

6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 136835 վկայականի համաձայն՝ 12.07.2013թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-75 մատյանի 149974 համարի տակ 09.07.2013թ. վաճառքի թիվ 92 պայմանագրի հիման վրա կատարվել է Երրորդ անձի սեփականության իրավունքի պետական գրանցում՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 37ա/11 հասցեում գտնվող 0,0018 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և 15,96 քառ. մետր մակերեսով վարսավիրանոց-կրպակի նկատմամբ /հատ.1, գ.թ. 50, 153/:

7. 2015թ. ապրիլի 21-ին Համայնքի և Հայցվորի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված «Պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» 2011թ. սեպտեմբերի 14-ի թիվ 371 պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 14 համաձայնագրով՝ Համայնքի և Հայցվորի միջև 2011թ. սեպտեմբերի 14-ին կնքված թիվ 371 պայմանագրի 2-րդ կետում «մինչև

2014թ. սեպտեմբերի 31-ը» բառերը փոխարինվել են «մինչև 2025թ. ապրիլի 21-ը» բառերով /հատ.1, գ.թ. 22/:

8. 2015թ. ապրիլի 21-ին Համայնքի և Հայցվորի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 51 պայմանագրով՝ Համայնքը Հայցվորին կառուցապատման իրավունքով տրամադրել է Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա/22 հասցեում գտնվող 8.1 քառ. մետր մակերեսով հողամասը /հատ.1, գ.թ. 20-21/:

9. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 018298 վկայականի համաձայն՝ 05.05.2015թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1-9 մատյանի 117778 համարի տակ, կառուցապատման իրավունքի պետական գրանցման 05.10.2011թ. թիվ 117402 վկայականի, 29.04.2015թ. կառուցապատման իրավունքի տրամադրման թիվ 51 պայմանագրի և 29.04.2015թ. թիվ 14 համաձայնագրի հիման վրա կատարվել է Հայցվորի կառուցապատման իրավունքի պետական գրանցում՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 37ա/22 հասցեում գտնվող 0,00241 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ մինչև 21.04.2025թ. գործողության ժամկետով /հատ.1, գ.թ. 23/:

10. Թիվ ՀՄ 17-0437դ դատաշինարարատեխնիկական փորձագիտական եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2009 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1600Ա որոշմամբ Բորիս Լազարի Գրիգորյանին Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 37ա շենքի շրջակայքում վարսավիրանոց-կրպակ տեղադրելու համար կառուցապատման իրավունքով 18 քառ. մետր մակերեսով հողամասի տրամադրումը կատարվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ: Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին հատկացված ընդհանուր 24.1 քառ. մետր մակերեսով հողամասում կառուցված առևտրային օբյեկտի և Բորիս Լազարի Գրիգորյանին հատկացված 18 քառ. մետր հողամասում կառուցված վարսավիրանոցի մեկը մյուսի նկատմամբ օգտագործման, շահագործման, մոտեցումների մուտքերի կազմակերպման պայմանների ապահովման տեսանկյունից խախտումներ մեկը մյուսի նկատմամբ չունեն, իսկ առևտրային օբյեկտի գլխավոր ճակատի կողմից նախատեսված պատուհանների մի մասի անմիջապես վարսավիրանոցի կառույցին կից լինելը պետական գրանցման ելակետային փաստաթղթերով հատակագծային տվյալներն իրականությանը չհամապատասխանող տվյալներով ներկայացնելու, նախագծային փաստաթղթերում իրական գոյություն ունեցող կառուցապատման վիճակն անտեսելու հետևանք է: Դավիթ Ռաշիդի Մանգասարյանի կողմից իրականացված շինարարության արդյունքում փաստացի կառուցապատվել է լրացուցիչ հատկացված հողամասի եզրագծից մինչև վարսավիրանոցի եզրագիծը չհատկացված 0.58մ հողաշերտը: Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին հատկացված 16 քառ. մետր տարածքի ընդլայնումը 8.1 քառ. մետր տարածքով հանգեցրել է քաղաքաշինական թույլատրող իրավական ակտերի խախտման հետևանքին՝ օբյեկտի շինարարության ավարտումը փաստագրելու իրավական ակտերի բացակայության պայմաններում: /հ1,գ.թ.200-204/:

11. Գործում բացակայում է Ստեփանակերտ քաղաքի գլխավոր հատակագիծը կամ դրա լուսապատճենը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող է ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորում է ստորև ներկայացվող պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. իրավաչափ է, արդյոք, վարչական մարմնի իրավասության շրջանակներում ընդունված՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի տնօրինմանն ուղղված վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի բավարարումը՝ երրորդ անձի կողմից հողամասի ձեռք բերման համար նախապատվության իրավունք չունենալու և նշված հողամասը ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով օտարման ենթակա չլինելու մասին պատճառաբանությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն /գործող Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մաս/՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ 45-րդ հոդվածի համաձայն /գործող Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մաս/՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1/ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե ա/խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ/չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին ԼՂՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ

իրավական ակտերի ուժով, 2/ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, 3/ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ԱՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ԱՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և /կամ/ ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ԱՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը ևս, առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքով ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունք: Միաժամանակ, անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի իրական, ռեալ իրավունքներ:

Փաստորեն, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով վարչական դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտների դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն, շահագրգիռ անձ հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե, արդյո՞ք, տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է ա/ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ/ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է անվավեր ճանաչվել, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1/ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2/ վիճարկվող վարչական ակտով խախտվել են կամ կարող են խախտվել հայցվորի Սահմանադրությամբ կամ միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները:

Վերոգրյալն ապացուցում է, որ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Հետևաբար, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունները կատարվել են օրենքի խախտմամբ, այլ պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Դավիթ Մանգասարյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ստեփանակերտի քաղաքապետի 27.06.2013թ. թիվ 1186Ա որոշումը, 02.07.2013թ. թիվ 92 անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և այդ պայմանագրի հիման վրա Բ.Գրիգորյանի անվամբ 12.07.2013թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-75 մատյանի 149974 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը /այսուհետ, նաև՝ վիճելի ակտեր/, այն պատճառաբանությամբ, որ Համայնքը սեփականության իրավունքով օտարման ոչ ենթակա մայթը, գնման նախապատվություն ունենալու հիմքով, սեփականության իրավունքով օտարելով երրորդ անձին, անտեսել և խախտել է մայթին կից հուշադրյուրի և հասարակական նշանակության շենքի կառուցման նպատակով իրեն տրամադրված հողամասը համապատասխան նպատակային նշանակությամբ օգտագործելու իր իրավունքները: Բացի այդ, Հայցվորը վիճարկվող ակտով որպես իր իրավունքների խախտում է համարել նաև երրորդ անձի կողմից քաղաքաշինական բնագավառում ուշադրության արժանի նորմերի ու կանոնների պահանջները չպահպանելը:

Վարչական դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ վիճելի ակտերով Հայցվորի իրավունքները կամ օրինական շահերը չեն խախտվել:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարել է, գտնելով, որ «.. Համայնքը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվի Վիճարկվող ակտում վկայակոչված ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված պայմանի՝ գնորդի մոտ գնման նախապատվության իրավունքի առկայությունը, ... 52...գործում առկա ապացույցների համակցությունը բավարար հիմք է տալիս արձանագրելու, որ Համայնքն ընդհանուր օգտագործման համար նախատեսված բնակավայրի հողը սեփականության իրավունքով փոխանցելով Երրորդ անձին՝ թույլ է տվել օրենքի խախտում, որի արդյունքում առաջանում է ընդհանուր օգտագործման համար նախատեսված մայթով Հայցվորի՝ որպես հետիոտն երթնեկելու և դրան սահմանակից հատկացված հողամասում կառուցված շինություններն ըստ նպատակային նշանակության օգտագործելու իրավունքը խախտվելու վտանգ»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը վիճարկվող վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով /երրորդ անձի մոտ գնման նախապատվության իրավունքի բացակայության հիմնավորմամբ/ անհիմն է, քանի որ սույն գործի նյութերով ապացուցվում է սեփականության իրավունքի տրամադրման պահին նախապատվության իրավունքի առկայությունը, մասնավորապես, Հայցվորի հայցադիմումից բխում է, որ Բ. Գրիգորյանը 2000 թվականին վիճելի տարածքում «իր համաձայնությամբ» տեղադրել է փայտե կրպակ-վարսավիրանոց, ինչպիսի ձևակերպումից հետևում է, որ Հայցվորն ինքն է ընդունում, որ Բ. Գրիգորյանը վիճելի վարչական ակտով այժմ սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքն ու վարսավիրանոցն օգտագործել է նաև մինչև դրա օրինական տիրապետող դառնալը: Այն փաստը, որ Երրորդ անձը վիճելի տարածքը որպես վարսավիրանոց-կրպակ օգտագործել է երկար տարիներ, ընդունում է նաև Համայնքի ներկայացուցիչը: Գործում գտնվող՝ քաղաքապետի 2009թ. նոյեմբերի 17-ի 1600Ա որոշմամբ Բ. Գրիգորյանին վիճելի վարչական ակտով տարածքը հատկացվել է կառուցապատման իրավունքով, որի հիման վրա Համայնքի և Բ.Գրիգորյանի միջև նույն թվականի նոյեմբերի 30-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 158 պայմանագիրը, որով նշված տարածքի նկատմամբ մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը Բ.Գրիգորյանին տրամադրվել է կառուցապատման իրավունք: Բ.Գրիգորյանին 2010թ. հունվարի 21-ին տրվել է թիվ 16 շինարարության թույլտվությունը՝ մինչև 2011 թվականի հունվարի 21-ը շինարարությունն ավարտելու պայմանով, և հաստատվել է վարսավիրանոց կրպակի նախագիծը, որից հետո միայն 2013 թվականի հունվարի 27-ին վիճելի վարչական ակտով այն սեփականության իրավունքով ուղղակի վաճառքի եղանակով տրամադրվել է Երրորդ անձին: Նշված ապացույցները հաստատում են, որ Բ.Գրիգորյանն ունեցել է վիճելի տարածքի նկատմամբ գնման նախապատվության իրավունք, և Համայնքի գործողություններն էլ բխել են ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնակարգումներից, որի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է...4/օրենքներով գնման նախապատվություն ունեցող անձանց:

ԼՂՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի մասնավորեցումը պետության և համայնքների սեփականության ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի տրամադրումն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման /մինչև դրա ժամկետի լրանալը/ իրավունքով գտնվող հողամասերը չեն կարող օտարվել այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել պայմանագիրը:

Չոդվածի կարգավորումից ակնհայտ է, որ պետական կամ համայնքային սեփականությանը պատկանող հողամասի նկատմամբ օգտագործման իրա-

վունք (կառուցապատման, անհատույց օգտագործման կամ վարձակալության) ունեցող սուբյեկտները՝ այդ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, օժտված են նախապատվության իրավունքով:

Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը վիճելի վարչական ակտն օրենքի խախտմամբ ընդունված լինելու վերաբերյալ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ վիճարկվող ակտը ոչ իրավաչափ լինելուն մասին, այն հիմնավորմամբ, որ Համայնքը սեփականության իրավունքով Երրորդ անձին է փոխանցել ԼՂՀ հողային օրենսգրքով սահմանված օտարման ոչ ենթակա ընդհանուր օգտագործման տարածքը՝ մայթը, որով խախտվել են դրան սահմանակից Հայցվորի կողմից կառուցված կառույցներն ըստ նպատակային նշանակության օգտագործելու, ինչպես նաև բնակչության երթևեկության համար նախատեսված մայթով տեղաշարժվելու իրավունքները, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ հողային օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ 2. Բնակավայրերի հողերը, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են 1/բնակելի կառուցապատման. 2/ հասարակական կառուցապատման. 3/ խառը կառուցապատման. 4/ ընդհանուր օգտագործման հողերի. 5/ այլ հողերի:

Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին՝ Քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենսգրքով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրելու կարգը սահմանում է կառավարությունը:

ԼՂՀ կառավարության «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 61 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ հողամասերի օտարումը, կառուցապատման և օգտագործման իրավունքի տրամադրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ համայնքի վարչական տարածքում՝ համայնքի ղեկավարի (Ստեփանակերտում՝ Ստեփանակերտի քաղաքապետի), համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից (բացի օրենքով սահմանված դեպքերից):

Նույն կարգի 46.2-րդ հոդվածի համաձայն՝ հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) մինչև 30 քառ.մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.

Այսինքն, մինչև 30քմ մակերեսով սպասարկման օբյեկտի համար հողատարածքը տրամադրվում է առանց մրցույթ հրավիրելու: Ընդ որում, կառուցապատման իրավունքի հասցեատերը համարվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող անձ:

ԼՂՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ 1. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝

(...)

3/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ պետական կամ համայնքային սեփականությանը պատկանող այն հողամասերը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվել են օգտագործման՝ բնակելի, հասարակական կամ արտադրական նշանակության շենքերի, շինությունների կառուցման և սպասարկման նպատակով:

3. Բնակավայրերի հողերի դասակարգումը, ըստ գործառնական նշանակության, սահմանվում է հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներով և բնակավայրերի գլխավոր հատակագծերով:

ԼՂՀ հողային օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ 1. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեման ներառում է հողամասերի բաշխումն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սահմանում է դրանց իրավական ռեժիմը, հիմնավորում է պետական և համայնքների հողերի արդյունավետ օգտագործման ուղղությունները համայնքի վարչական տարածքում: /.../

4. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներն օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է կառավարությունը:

Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն ամրագրում են. «2. Հողամասերը տրամադրվում են հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, բնակավայրերի գլխավոր հատակագծերին համապատասխան ու դրանց հիման վրա: 3. Համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները, բնակավայրերի գլխավոր հատակագծերը կազմում են համայնքների ղեկավարները, /.../ կամ վերջիններիս կողմից լիազորված անձինք: Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները և բնակավայրերի գլխավոր հատակագծերը լիազորված պետական մարմինների հետ սահմանված կարգով համաձայնեցնելուց հետո ներկայացվում են կառավարության հաստատմանը:»:

Իսկ նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ պետության և համայնքների սեփականության հողամասեր տրամադրելու կարգը սահմանում է կառավարությունը:

ԼՂՀ հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում է, «Պետության և համայնքների սեփականության հողամասերն օտարվում են օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու

համար: Օտարման ենթակա հողամասերը որոշվում են հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի հիման վրա:»:

Վերոնշյալ իրավանորմերի պահանջներից ակնհայտ է դառնում, որ Համայնքն իրավասու է պետության և համայնքների սեփականության հողամասերն օտարել բացառապես հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի հիման վրա մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով, դրանց բացակայության դեպքում՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով նախատեսված նպատակներով օգտագործելու համար:

Գործում առկա գրավոր ապացույցներից, մասնավորապես, 17.11.2009թ. թիվ 1600Ս Քաղաքապետի որոշմամբ կառուցապատման իրավունքով Բ.Գրիգորյանին տրամադրված 18.0 քմ՝ 6.0մ երկարությամբ հողամասի կադաստրային քարտեզի հիմքով կազմված գլխավոր հատակագծի /հ1, գ.թ.155/, Կադաստրի կողմից կազմված հողամասի տեղադիրքը ներկայացնող հատակագծի և կադաստրային քարտեզների /գ.թ.109-116/ համաձայն՝ վիճելի հողամասը գտնվում է Ազատամարտիկների փողոցը և Մ. Գոշի փողոցը կապակցող թաղամասային անցումի տարածքի մեջ մտնող, սակայն 37ա շենքի կողմից կադաստրային քարտեզով առանձնացված երկայնական Ազատամարտիկների փողոցից սկսվող հատվածի վերջնամասում: 3.0x6.0մ վարսավիրանոցին տրամադրված հատվածը հանդիսանում է կադաստրային քարտեզով «մայթ» բնութագրով վերը նշված առանձնացված երկայնական-ձգված հատվածի շարունակություն՝ 6.0մ երկարությամբ եզրափակելով այդ հատվածը: Այդ տարածքը կադաստրային 2017թ. քարտեզների տվյալներով նշված չէ որպես մայթ, այլ ունի «2013թ. փոփոխություն» ոչ հստակ բնութագիր: Նշվածները թույլ են տալիս հանգել այն հետևության, որ վիճելի ակտով Երրորդ անձին հատկացված վարսավիրանոց-կրպակի տարածքը բնակչության երթևեկության համար առանձնացված տարածք չէ:

Գործում գտնվող թիվ ՀՄ 17-0437դ դատաշինարարատեխնիկական փորձագիտական եզրակացության համաձայն /գ.թ.200-201/՝ «Բորիս Գրիգորյանի սեփականության իրավունքի գրանցման վկայականում արտացոլված հողամասի սահմանները համապատասխանում են առուվաճառքի պայմանագրին կից հողամասի հատակագծում նշված սահմաններին: Նշված հետևությունը ներկայացվում է հիմք ընդունելով վարչական գործի 1-ին հատորի 109-113 էջերում տրված կառուցապատման փաստացի իրադրությունը ներկայացնող կադաստրային քարտեզի հիմքով ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմված հատակագծերը ու էլեկտրոնային կրիչով տրված նյութերը /տես թիվ 1-կադ. քարտեզ Հավելվածներ/, 115-116 էջերում տրված ԱԳԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման տեղեկանքով ներկայացված կադաստրային քարտեզի հատակագիծը ու էլեկտրոնային կրիչի նյութերը, 09.11.2017թ. թիվ 0076/05/17 գրությամբ միջնորդությանը ի պատասխան տրամադրված կադաստրային հատակագիծը ու էլեկտրոնային կրիչով տրված նյութերը /տես թիվ 2-կադ. քարտեզ Հավելվածներ/»:

Այն հանգամանքը, որ վիճելի ակտով հատկացված Երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող տարածքը չի հանդիսանում

հետիոտնի համար նախատեսված երթևեկության մաս՝ մայթ, երևում է նաև Հայցվորի և Երրորդ անձի կողմից Դատարան ներկայացված լուսանկարներից /հատ.1, գ.թ. 62,72/: Նշվածների արդյունքում Գերագույն դատարանը գտնում է, որ Վիճարկվող ակտով Երրորդ անձին փոխանցված հողամասը չի համարվում բնակչության երթևեկության համար նախատեսված մայթ, հետևաբար, Համայնքն իրավասու էր այն սեփականության իրավունքով օտարելու:

Վերաքննիչ դատարանի փաստարկը, թե Երրորդ անձի կողմից կառուցված վարսավիրանոց-կրպակի տեղադրմամբ խախտվել են դրան սահմանակից Հայցվորի կողմից կառուցված կառույցներն ըստ նպատակային նշանակության օգտագործելու Հայցվորի իրավունքները, ևս չի հաստատվում գործի նյութերով, քանի որ թիվ ՀՄ 17-0437 դատաշինարարատեխնիկական փորձագիտական եզրակացության համաձայն «Դավիթ Ռաշիդի Մանգասարյանին հատկացված ընդհանուր 24.1 քառ. մետր մակերեսով հողամասում կառուցված առևտրային օբյեկտի և Բորիս Լազարի Գրիգորյանին հատկացված 18 քառ. մետր հողամասում կառուցված վարսավիրանոցի մեկը մյուսի նկատմամբ օգտագործման, շահագործման, մոտեցումների մուտքերի կազմակերպման պայմանների ապահովման տեսանկյունից խախտումներ մեկը մյուսի նկատմամբ չունեն, իսկ առևտրային օբյեկտի գլխավոր ճակատի կողմից նախատեսված պատուհանների մի մասի անմիջապես վարսավիրանոցի կառույցին կից լինելը պետական գրանցման ելակետային փաստաթղթերով հատակագծային տվյալներն իրականությանը չհամապատասխանող տվյալներով ներկայացնելու, նախագծային փաստաթղթերում իրական գոյություն ունեցող կառուցապատման վիճակն անտեսելու հետևանք է:» /գ.թ.200-204, հ.1/:

Այսպիսով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը և դրա իրավաբանական հետևանքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ հիմքերը բացակայում են, քանի որ սույն գործի քննությամբ չի հիմնավորվել, որ Քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 1186Ա որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, բացի այդ, այն չի առնչվում սույն գործով հայցվոր Դավիթ Մանգասարյանի իրավունքներին կամ օրինական շահերին և չի խախտում դրանք: Հետևաբար, Վարչական դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ հայցը ենթակա է մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.21-րդ, 117.22-րդ և 118.11-րդ հոդվածների ուժով, Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ բեկանելու համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Գերագույն դատարանի լիազորությունը, հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է

Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Գերագույն դատարանի կողմից Վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով նկատի ունենալով այն, որ Բորիս Գրիգորյանը և Ստեփանակերտի քաղաքապետարանը վճարեկ բողոքների համար յուրաքանչյուրը վճարել է 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճարեկ բողոք բերած անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Գերագույն դատարանը գտնում է, որ Բորիս Գրիգորյանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարները ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Դավիթ Մանգասարյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.16-118.19-րդ հոդվածներով և 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երրորդ անձ Բորիս Գրիգորյանի ու նրա ներկայացուցիչ Ա.Ապրեսյանի և Ստեփանակերտի քաղաքային համայնքի վճարեկ բողոքները բավարարել: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի ԸԻԴ 0036/05/2017 վարչական գործով 2019 թվականի հունվարի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր

իրավասության առաջին ատյանի /Վարչական/ դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դավիթ Մանգասարյանից հոգուտ Բորիս Գրիգորյանի բռնագանձել 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դավիթ Մանգասարյանից հոգուտ Ստեփանակերտի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կ. ՂԱՐԱՅԱՆ